Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 77

ԵՐԵՔՇԱԲԹԻ 3 ԱՊՐԻԼ 1884 (Ն. Տ.) 15 ԱՊՐԻԼ

19 ՃԷՄԱԶԻԼ ԱԽԸՐ 1301

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՅՄԱՆՔ

Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 դուրուշ երկու անգամի համար 2 դուրուշ է. աւելի անգամներու համար զանազան սակարկութիւն կըլլայ ։

Օրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել՝

«Առ խմբագրութիւն ԱՐԵՒԵԼՔ օրագրի»

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ Ղալաթիա, Իզմիրլի օղլու խան, թ. 19.

Իսկ գաւառներէն հետեւեալ հասցէիւ՝

درعلیه‌ده غلطه‌ده ازمیرلی اوغلی خاننده ۱۹ نمروده

{ ارەولك } غزته‌سی اداره‌سنه

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պօլսոյ համար	Տարեկան	դահեկան	արծաթ	200
« «	Վեցամսեայ	«	«	100
« «	Եռամսեայ	«	«	50
« «	Ամսական	«	«	20
« «	Հատը	«	«	1
Գաւառաց համար	Տարեկան	«	«	240
« «	Վեցամսեայ	«	«	120
« «	Եռամսեայ	«	«	60
Օտար երկիրներ	Տարեկան	Ֆրանք		56
« «	Վեցամսեայ	«		28

Դուրս ղրկուած լրագրաց ճամբու ծախքը խմբագրութեան վրայ է ։

40 ՓԱՐԱ

Կ. ՊՈԼՍ[illegible]

ԵՐԵՔՇԱԲԹԻ 3 Ապրիլ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵԳԻՊՏՈՍ ԵՒ ԱՆԳԼԻԱ

Նուպար փաշայի հրաժա[illegible] ման խնդիր է միշտ ։ Նու[illegible] շա կը հրաժարի որովհետեւ [illegible] համար հաւանիլ անգլիացի պաշտօնատարի մը, Գ. Քլիֆորտ Լոյտի գործադրել ուզած արմատական փոփոխութեանց ։ Այս Գ. Քլիֆորտ Լոյտ տարօրինակ մարդ մ՚է ։ Սահմանադրական Անգլիոյ ամենէն բռնապետական մարդն է ։ Կարծես թէ Յուլիոս Կեսարի ժամանակէն մնացած հնաքրքրաշարժ հնութիւն մը լինէր ։ Եգիպտոս գտնուելէն առաջ Իռլանտա գտնուած, և իբրեւ ոստիկանապետ պաշտօն վարած է ։ Ոստիկանապետութեան պաշտօնէն ներքին գործոց նախարարի խորհրդականութեան մեծ հեռաւորութիւն կայ, բայց Լոնտոնի կառավարութիւնը խորհած պէտք է լինի թէ Եգիպտոսի մէջ բարենորոգում ի գործ դնելու համար քաղաքագէտներէ աւելի ոստիկանապետներու պէտք ունի ։ Դժբախտաբար Նուպար փաշան առաւել լրջօրէն ըմբռնած լինել կը թուի իր պաշտօնը ։ Նա չի կրնար համաձայնիլ Գ. Քլիֆորտ Լոյտի հետ, և որովհետեւ անգլիական կառավարութիւնը կը կարծէ թէ զԳ. Քլիֆորտ Լոյտ պաշտօնանկ ընելով փառս հասուցած կը լինի իր ազդեցութեան յԵգիպտոս, Նուպար փաշա վեհանձնօրէն կը քաշուի ասպարէզէն ։ Եգիպտոսի շահերն և իր անձնական արժանապատուութիւնն իրեն թոյլ չէին տար գործադրել այնպիսի պաշտօնէի մը կամքն, որ մինչ յԻռլանտա պաշտօն կը վարէր, ամբողջ ժողովուրդ մը իրեն դէմ յարոյց, և Եգիպտոսի մէջ ալ նոյն ընթացքը շարունակեց ։ Այս Գ. Քլիֆորտ Լոյտ նոյն պաշտօնեայն է, արդարեւ, որ իբր երեք տարի առաջ շրջաբերական մը հանեց, Իռլանտայի ոստիկանական մարմնոյն ուղղեալ, հրամայելով որ առանց կանխաւ ազդարարութիւն ընելու կրակ ընեն ամեն անձի վրայ որ իրենց կասկածելի կը թուի ։ Մեծ եղաւ գայթակղութիւնն որ յառաջ եկաւ անգլիացի պաշտօնակալին այս [illegible]մարդկային վայրագ հրամանին ։ Լոնտոնի կառավարութիւնը [illegible]կմանապէս պարտաւորեցաւ ետ առնուլ Գ. Քլիֆորտի շրջաբերականը, բայց պաշտօնակալն իր գրից մէջ պահեց, կարծես թէ Իռլանտացւոց աչքը վախցնելու համար, որք ի վերջոյ զայրանալով, քիչ մնաց որ Լինչի օրէնքն ի գործ դնէին Գ. Քլիֆորտի վրայ, հրապարակաւ սպաննելով զնա, երբ բարեբախտաբար Եգիպտոսի առաջնապը վրայ եկաւ, և Գ. Քլիֆորտի համար պաշտօն մը գտնուեցաւ Նեղոսի ափանց վրայ ։ Բայց միթէ Նուպար փաշայի պէս քաղաքագիտութենէ և աշխարհավարութենէ հասկցող մարդ մը կրնա՞ր գլուխ ծռել այնպիսի ստորադաս պաշտօնէի մը առջեւ, որ անհանդուրժելի եղած էր Իռլանտացիներուն իսկ ։ —Ոչ անշուշտ ։ Գ. Քլիֆորտ Լոյտ Եգիպտոսի մէջ ուզեց նոյն ընթացքը բռնել զոր բռնած էր յԻռլանտա, և կռուի բռնուեցաւ ո՛չ միայն Եգիպտական նախարարապետի մը հետ, այլ իւր ազգակիցներուն հետ իսկ. օրինակի համար, ընդհանուր դատախազ Սըր Պենըքն Մաքսուէլի հետ, որ խելքը գլուխը գտնուող մարդ մը լինելուն համար, Գ. Քլիֆորտի հետ անհամաձայնութիւն ունենալու դժբախտութեան մէջ ինկած է ։ Կը ցաւինք այնպիսի աշխարհավարութեան մը վրայ, որ Գ. Քլիֆորտի պէս մարդիկն իրենց պաշտօնին վրայ պահելու պէտքը կը զգայ ։ Գ. Կլատստոնի և Լորտ Կըրանվիլի պէս լուրջ քաղաքագէտներ ի՞նչպէս պատշաճ կը համարին այսպիսի պաշտօնակալի մը յանձնել իրենց աշխարհավարութեան գործադրութեան հոգն այնպիսի երկրի մը մէջ, ուր ժողովուրդը դեռ չի ճանչնար Անգլիան. և բնականապէս կը կարծէ թէ բոլոր Անգլիացի նախարարներն ալ Գ. Քլիֆորտի պէս խակ և ծայրայեղ մարդիկ են ։ Եթէ Նուպար փաշան չկրցաւ համաձայնիլ Գ. Քլիֆորտի հետ, ապա ո՞վ պիտի համաձայնի Իռլանտայի նախկին ոստիկանապետին հետ. Նուպար փաշան կ՚ըսենք, որ Անգլիոյ հետ համաձայնութեամբ գործելու պէտքն ամենէն աւելի զգացող եգիպտական նախարարն էր. Նուպար փաշան կ՚ըսենք, զոր նոյն ինքն անգլիացի նախարարապետներ, նախարարներ և կարեւորագոյն թերթեր միշտ գովեստիւք յիշած են իբրեւ կատարեալ քաղաքագէտ և Եգիպտոսի վերածնութեան գլխաւոր յոյսն ։ Ուրեմն, կամ յառաջագոյն չափազանց շողոքորթած են զՆուպար փաշան, մինչդեռ բնաւ պէտք չունէին, կամ հիմա անիրաւապէս կը վարուին այդ մարդուն հետ ։ Նուպար փաշա կ՚ըսէ Թայմզի թղթակցին, ինչ որ միշտ իւր անձնական ընթացքով ապացուցած է, թէ Անգլիա, ներկայ պարագայից մէջ, կրնայ Եգիպտոսի փրկութեան գլուխը լինել, մինչդեռ Եգիպտացիք այդ մարմնոյ թեւերն են ։ Ո՛չ ապաքէն մեծ զիջում մ՚է այս ։ Բայց այժմ Անգլիացիք կ՚ուզեն թէ՝ գլուխ, թէ թեւ և թէ ամեն ինչ լինել յԵգիպտոս ։ Կ՚ուզեն տեղական և գաւառական բոլոր վարչութիւնն իրենց ձեռաց մէջ կեդրոնացնել ։ Ո՛ր Եգիպտական նախարարն, որչափ ալ անգլիասէր լինի, յանձն կ՚առնու գործել այսպիսի պայմանաց ներքեւ ։ Անգլիացիք չեն համարձակիր յայտնի համարձակ հովանաւորութիւն (protectorat) հաստատել Եգիպտոսի վրայ, կամ Հնդկաստանի կէս–ինքնօրէն պետութեանց կարգն անցունել Փարաւոններու երկիրը ։ Գ. Կլատստոնի նախագահութեան ներքեւ գտնուող նախարարութենէն ալ այսպիսի անպարկեշտ գործ մը չենք կրնար ակնկալել ։ Բայց յայնժամ ի՞նչ կը նշանակէ եգիպտական նախարարները զրկել իրենց բոլոր գործադրութեան ազատութենէն, և անհանդուրժելի պայմաններու ենթարկել զանոնք ։ Ո՞վ է ուրեմն Գ. Քլիֆորտ Լոյտ, զոր իր պաշտօնին վրայ պահել կարենալու համար Անգլիա Նուպարի պէս նախարարապետէ մը կը զրկէ զԵգիպտոս ։ Նուպար փաշային Գ. Քլիֆորտ Լոյտի դէմ պաշտպանած սկզբունքներն ամենէն լուսաւորեալ ազգաց աշխարհավարութեան համաձայն սկզբունքներ են ։ Եգիպտական նախարարապետը կ՚ըսէ թէ յետամնաց երկիր մը, ինչպէս է Եգիպտոս, չի կրնար յանկարծ ընդունիլ եւրոպական կարգ և կանոն, այլ հարկ է զգուշութեամբ և տակաւ առ տակաւ մուծանել եւրոպական գաղափարներն ու գիտութիւններն ։ Ինք որ շատ տեսած է Եւրոպան, և սնուցեալ է եւրոպական գաղափարներով, ինք որ արդէն դարուս ոգւոյն համաձայն բարենորոգումներ մուծած է յԵգիպտոս, կ՚ըսէ թէ հակառակ չէ նոյն ուղղութեամբ առաւել կերպիւ յառաջ տանելուն, բայց պէտք է զգուշութիւն և խոհեմութիւն. վերջապէս պէտք չէ երկիրը պառճառել Եգիպտացւոց, այլ պէտք է հետզհետէ զանոնք վարժեցնել յառաջդիմական գաղափարներու ։ Ո՛չ ապաքէն Անգլիացիներն իսկ, այնչափ քաղաքակրթեալ, այնչափ զարգացած ազգ մը լինելով հանդերձ, հիմնական և արմատական բարենորոգումներէն կը խորշին, և Խորհրդարանէն սկսեալ իրենց բոլոր հիմնարկութիւններն ու կարգերն և կանոնները տակաւ առ տակաւ կը բարւոքեն, և ո՛չ թէ մէկ հարուածով ։ Արդ, ի՛նչ որ անկարելի է Անգլիոյ մէջ, միթէ կրնա՞յ հանդուրժելի լինել Եգիպտոսի մէջ ։

Չենք գիտեր թէ Նուպար փաշայի հրաժարման խնդիրն ի՞նչպէս պիտի վերջանայ ։ Լուր կայ թէ Խտիւ Թէվֆիք փաշա չէ ընդուներ իւր հաւատարիմ և խելացի նախարարապետին հրաժարականը ։ Բայց Գ. Քլիֆորտ Լոյտ կը մնայ իւր պաշտօնի վրայ, մինչդեռ Նուպար փաշա, իբրեւ նախարարապետ զգալով թէ երկրին առջեւ առաջին պատասխանատուն ինք է, չընդունիր բնաւ որ կարծեաց անհամաձայնութիւնք կենան իրեն և իւր ստորադասներու միջեւ ։ Գ. Քլիֆորտ Լոյտ վարչական աստիճանակարգութեամբ ստորադասեալ է Նուպար փաշային, բայց կ՚ուզէ իւր կամքին հպատակեցնել այդ ծեր նախարարն, որու քով միացած են Հայու մը ծանրութեան և լրջութեան հետ Օսմանցւոյ մը արժանապատուութեան զգացումը ։ Մեծ վէճ կայ Անգլիացւոց մէջ Նուպար փաշայի հրաժարման առթիւ ։ Ոմանք Նուպար փաշայի կայութեան կը համակրին, այլք կը պահանջեն անգլիական փրկութիւն մը միանգամ ընդմիշտ հաստատել յԵգիպտոս ։ Այս վերջին առաջարկութեան դէմ նորէն կը բողոքենք մեր բոլոր ոյժով, և կը յուսանք թէ Գ. Կլատստոնի պէս ուղղամիտ, պարկեշտ և պատուաւոր նախարարապետի մը օրով, Մեծն Բրիտանիա այդպիսի ամօթալից սխալ մը չգործեր ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դեսպանատանց գլխաւոր թարգմանք հինգշաբթի առաւօտ մինչեւ շոգենաւ պիտի երթան՝ Աւստրիոյ դահաժառանգ իշխանն ու իշխանուհին դիմաւորելու համար, և Աւստրո-Հունգարիոյ երեսփոխներէն 150 հոգի Լոյտի մէկ շոգենաւովը յատկապէս մայրաքաղաքս կուգան, ուսկից մինչեւ Պէօյիւքտէրէ պիտի երթան ։

Կըսուի, թէ Պօլսոյ քաղաքապետ Մազհար փաշայի տրամադրութեամբ, Բերա նոր Թատրոնին մէջ, ի պատիւ իշխանին և իշխանուհւոյն, Չուխաճեան Տիգրան էֆէնտիի յօրինած հռչակաւոր Լէպլէպիճի Խօրխօռ ներկայացնելու համար արտաքոյ կարգի պատրաստութիւնք կ՚ըլլան ։ Դերասանաց խումբը՝ 40, և նուագածուացն՝ 30 հոգիէ պիտի բաղկանայ ։ Ներկայ պիտի գտնուին նախարարաց բազում մը և հանդոյն դեսպանք ։

Աւստրիոյ դահաժառանգ իշխանին և իշխանուհւոյն գալստեան առթիւ եղած արտասովոր պատրաստութեանց մէջ կարեւոր տեղ մը կը բռնեն Լոյտի ընկերութեան կատարած պատրաստութիւններն ։ Ընկերութեան կեդրոնական վարչութենէն եկած հրահանգաց համեմատ, Լոյտի ընկերութիւնը նոյն օրն եօթն շոգենաւ պիտի յատկացնէ իշխանին ու իշխանուհւոյն Սեւ ծովու նեղուցէն դիմաւորելու ։ Այս շոգենաւուց մին յատկացեալ է Կ. Պոլսոյ պատուաւոր ընտանեաց տիկնայց և օրիորդաց, որք փունջերով և պսակներով ընդառաջ պիտի ելնեն իշխանուհւոյն ։ Երկրորդ շոգենաւուն մէջ պիտի հիւրընկալուին դեսպանական մարմնոյ անդամք ։ Երրորդին մէջ կառավարական պաշտօնատարք ։ Չորրորդին մէջ լրագրապետք ։ Հինգերորդին մէջ ակումբաւորք և վաճառականք, և այսպէս մինչեւ վերջը ։ Բոլոր այս անձանց յատուկ հրաւէրներ ղրկուած են Լոյտի ընկերութեան Կ. Պոլսոյ գործակատար Գ. Ֆայնի հրամանատարին կողմէ, որ քանի մը շաբաթներէ հետէ մեծ ջանքեր կ՚ընէ հաճելի ընդունելութիւն մ՚ընելու Աւստրիոյ դահաժառանգ իշխանին և իշխանուհւոյն, և միանգամայն պատուասիրելու Կ. Պոլսոյ ամեն ազգի հասարակութեան պատուաւոր անդամներն որք պիտի պատասխանեն իր հրաւէրին ։

Այս շոգենաւք յառաջիկայ հինգշաբթի առաւօտ ժամ 11ին միջոցները ճամբայ պիտի ելնեն ։ Կը լսենք թէ վեհ. Սուլթանին հրամանաւ, պատուաւոր հայ ընտանիքի մը վերաբերեալ շնորհալի և լեզուագէտ Տիկին մը [illegible] իշխանուհւոյն պիտի ընկերակցի իբրեւ թարգման ։

Սէլանիկի պարսկական հիւպատոս Միրզա Ալի Խան, որ ժամանակէ մը հետէ Աթէնք կը գտնուէր՝ գործոյ առթիւ, մայրաքաղաքս եկած է ։

Պարսկական դեսպան Մոհսին խան՝ իւր հիւրն եղող Միրզա Նէճաթի հետ երէկ Բ Դուռն երթալով՝ տեսակցած արտաքին գործոց նախարար Արիֆի փաշայի հետ ։

Ուսեխտար Ֆուատ փաշայի կողմէ, Սէլանիկի նախորդ [illegible] Արիֆ էֆէնտիի տունէն գողցուեր են 5-600 լիրայի արժէքով ոսկեղէն ու արծաթեղէն և այլ ծանրագին կարասիք, զորս Արիֆ էֆէնտի տանը մէկ սենեակին մէջ դրած փակած էր, և տանը մէջ երկու տարիէ հետէ՝ [illegible], քանի մը պատուաւոր վարձակալք կ՚ընակէին ։

Տփղիսէն կը գրեն թէ տեղական կառավարութիւնն արտօնութիւն տուած է երկու անգլիացիներու, որք ամիս մ՚ի վեր հրաման կը խնդրէին Միրախոզի անտառները պըտտելով՝ ապագայ շահագործութեան մը նպատակաւ ։

Եւրոպայէն ստացուած վերջին լրագիրք հեռագիր մը կը հրատարակեն, ուր թէ մեծ տէրութեանց ներկայացուցիչք խորհուրդ տուած են Բ. Դրան Եգիպտական գործոց նկատմամբ շրջաբերական չղրկել Եւրոպիոյ դահլիճներուն, այլ վստահութիւն ունենալ Մեծին Բրիտանիոյ կողմէ տրուած ապահովութեան և իւր խոստմանց կայութենէն չշեղիլ ։

Ստամպուլ կ՚իմանայ թէ Օսմ. Բէժիի արժեթղթոց մէկ մասն այսօր հրապարակ պիտի ելնէ, առանց սակայն այս լրոյն ստուգութիւնն երաշխաւորելու ։

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

55

ԽԱՉԱԳՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Բ.

ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

—Էհ, ասում էր մի ծերունի խաչագող արհամարհական ժպիտով,— այդ ինչ գողութիւններ են, որոնցմով պարծենում էք դուք, երբ ես երիտասարդ էի, գողացայ հնդկաց աստուծոյ աչքերը ։

Ամենքը ծիծաղեցին. ծերունու ասածը շատերին անհաւատալի երեւաց ։

—Երեխաները ու յիմարները ծիծաղում են ամեն բանի վրա, երբ չեն հասկանում, պատասխանեց ծերունին, որին, ինչպէս երեւում էր, վիրաւորեց ընկերների արհամարհանքը ։ —Ձեզ անհաւատալի է թւում իմ ասածը, ականջ դրէք, ես կը պատ[illegible] ։

Նա սկսեց իր պատմութիւնը այսպէս ։

«Հնդկաց աստուածները մեր Աստուծոյ նման չեն. մերը աչքի չէ երեւում. իսկ նրանց աստուածները միշտ կանգնած են տաճարների մէջ, ամեն մարդ տեսնում է, հարցմունք է անում և պատասխան է ստանում ։ Ես մտայ այդ տաճարներից մէկի մէջ, ուր կանգնած էր գլխաւոր աստուածներից ամենամեծը ոսկեղէն հագուստով ։ Թէեւ ոսկին շատ սիրուն բան է, բայց ինձ աւելի գրաւեցին նրա գեղեցի՜կ աչքերը ։ Գեղեցի՛կ էին, աննման գեղեցի՛կ, ես խելագարի նման սիրահարուեցայ այդ աչքերի վրա ։ Նրանք կազմած էին երկու հատ խոշոր ադամանդներից և ճրագի նման վառւում էին ։ Ադամանդներու իւրաքանչիւրը աղաւնու ձուի չափ կը լինէր ։ Այո, իմ սիրտը գրաւեցին այդ փայլուն աստղերը և ես կատարելապէս սիրահարուեցայ նրանց վրա ։ Ե՛կ, մտածեցի, քեզ նւիրէ այդ աստուծոյ սպասաւորութեանը, որ այդպիսի գեղեցիկ աչքեր ունի ։ Եւ ընդունուեցայ այնտեղ, ինչ էք կարծում, ոչ թէ իբրեւ հասարակ սպասաւոր, այլ պրահման, - այսպէս են կոչւում նրանց քահանաները ։ Ես կատարում էի իմ պաշտօնը ամենայն ջերմեռանդութեամբ, ամենայն անձնանուիրութեամբ, այնպէս որ, փոքր ժամանակում գրաւեցի ոչ միայն իմ աստուծոյ շնորհը, այլ և ժողովրդի յարգանքը ։ Ինձ յանձնեցին տաճարի բանալիները և նրա հսկողութիւնը ։ Այդ տեւեց մի քանի ամբողջ տարիներ ։ Վերջը պրահմանական կեանքը, անընդհատ աղօթքները, խիստ ճգնութիւնները ձանձրացրին ինձ ։ Ես փնտռեցի վերադառնալ իմ հայրենիքը ։ Բայց ցանկալի էր ինձ ունենալ մի յիշատակ այն աստուծոյ, որին այնքան տարիներ ծառայել էի ։ Ես ընտրեցի աչքերը, որոնց վրա միշտ սիրահարուած էի ։ Մի բարի գիշերում կատարուեցաւ այդ գործը ։ Բայց ո՞րտեղ պէտք էր պահել խոշոր ադամանդները ։ Սրունքներիս կաշին ծակեցի, ադամանդները դրեցի վէրքի մէջ, յետոյ լաւ փաթթեցի ։ Այժմ սատանան էլ չէր կարող գտնել ։ Մնաք բարեաւ ասեցի իմ աստուծուն և հեռացայ ։ Հնդկաստանի անտառները խիստ հիւրընկալ ծոց ունեն փախստականների համար, եթէ առիւծների և վագրների ճանկը չընկնէ մարդ ։ Բայց իմ աստուծու օրհնութիւնը ինձ հետ էր, վտանգ չը պատահեց ։ Ես իմ պրահմենի հագուստը փոխեցի, և հալածված պարիայի հագուստով շարունակեցի իմ փախուստը ։ Պարիային ոչ ոք չէ մօտենում» ...

Ծերունին վերջացրեց. ամեն կողմից լսելի եղան գովասանական ձայներ. մի քանիսը ծափահարեցին ։

Մի այլ խաչագող ասաց ։

—Ես մի օր գողացայ մի մեխաքոյն աւանակ, և սեւ գունով ներկելով, ծախեցի դարձեալ իր տիրոջը. Նա չը կարողացաւ ճանաչել իր աւանակին ։

—Կարծեմ ներկը աւելի թանգ արժեց քեզ, քան թէ այն փողը, որ դու ստացար, նկատեց նրան մէկը ծիծաղելով ։

—Իրաւ է, ներկը աւելի թանգ արժեց, պատասխանեց նա, — բայց ես ընկերիս հետ գրազ էի բռնել ։

—Եւ դու կնքեցիր մեր ճակատին «էշ ներկող» անունը, վրաբերեց առաջինը ։

Բոլորը ծիծաղեցին ։

Մի ուրիշը պատմեց, թէ իր կեանքում փոխել է տասն զանազան կրօնքներ և զանազան դաւանութիւններ ։ Շիրազում ընդունել է մահմեդականութիւն և ամուսնացել է մի սեւ գեղեցիկ աղջկայ հետ ։ Կիլիկիայի մէջ ընդունել է կաթոլիկութիւն և պսակուել է կաթոլիկ աղջկայ հետ. յետոյ մի կաթոլիկ գերապայծառից ստացել է ժողովարարութեան թուղթ, պտըտել է Իտալիայում, Սպանիայում, և Ֆրանսիայում, հաւաքել է ահագին հարստութիւն, այլ ես չի վերադարձել իր կնոջ մօտ. Կիեւում ընդունել է ուղղափառ եկեղեցու դաւանութիւնը, մի գեներալ նրա կնքահայր է դարձել, և ընծայելով մի նշանաւոր գումար, ամուսնացրել է իր աղախնի հետ ։ Իսկ Կ. Պոլսի մէջ ընդունել է բողոքականութիւն, տեղային միսիոնարների թղթով գնացել է Ամերիկա, փողեր է հաւաքել և ամերիկացի կին է առնեցել և այլն ։

Այդ մարդուն չըվացրին, որովհետեւ խիստ հասարակ բան էր պատմում, որովհետեւ նրանց մէջ չը կար մէկը, որ տասն անգամ կնոջը փոխած չը լինէր ։

Մի երիտասարդ խաչագող, բաւական գեղեցիկ դէմքով, շնորհալի, և աշխարհային կեանքի սովորած մարդ, պատմեց, թէ եւրոպական մի մայրաքաղաքում նա իրան ձեւացրեց իշխան Արարատի. ման էր գալիս թանգագին ակներով զարդարած խնջարով և նոյնպէս դահարներով զարդարած, ոսկեայ քամարով. Նրա կառապանի մօտ միշտ նստած էր լինում մի սեւամորթ արաբ ։ Մի պարահանդէսի ժամանակ նրա վրա սիրահարւեցաւ մի հարուստ կոմսի աղջիկ. խոստացաւ նրա հետ պսակուել, իսկ օրիորդի ծնողները խոստացան մեծ օժիտ տալ ։ Օժիտի կէսը նա ստացաւ և փախաւ, բայց օրիորդի հետ չամուսնացաւ ։ Խեղճ աղջիկը մեռաւ բարակացաւից, երբ տեսաւ իր փեսային անյայտացած ։

Այդ պատմութիւնը, որ շատ հետաքրքրական էր և շատ գեղեցիկ կերպով նկարագրեց երիտասարդը, նոյնպէս անցաւ խիստ աննշան կերպով, իսկ մի քանիսի մէջ առաջացրեց արհամարհանք ։ Որովհետեւ սիրային յաջողութիւնները առհասարակ մի տեսակ թուլամտութիւն էր համարւում ամեն մի խաչագողի համար, և մինչեւ անգամ ամօթ էր բերում նրան ։ Խաչագողը կարող էր սէրը ընտրել որպէս միջոց մէկին կողոպտելու համար, իսկ ճշմարտապէս սիրել անվայել էր ։ Երիտասարդի պատմութիւնից երեւաց, որ ինքն էլ սիրահարուած է եղել կոմսուհի օրիորդի վրա ։ Այդ պատճառով մէկը նկատեց նրան ։

—Դուք այն ժամանակ արժան կը լինէիք գովասանութեան, երբ փոխանակ [illegible] այն օրիորդի փողերը և փոխանակ նրա հետ սիլի-բիլի անելու, կը պսակուէիք նրա հետ, կը ստանայիք ամբողջ օժիտը և յետոյ բաց կը թողնէիք, կը հեռանայիք ։

Այդ նկատողութիւնը ընդհանուր հաւանութիւն ստացաւ ։

ՐԱՖՖԻ

(Շարունակելի)

Երէկ, Սէրվէր փաշա, Օգոստ. Սուլթանին պատուոյ թիկնապահներէն Ահմէտ փաշա, արտաքին գործոց պաշտօնատան արարողապետ Իպրահիմ պէյ, Իզզէտտին շոգենաւով Վարնա ուղևորեցան՝ դահաժառանգ իշխանն ու իշխանուհին դիմաւորելու համար։

Ներքին գործոց նախարար Էտհէմ փաշա ապաքինելով՝ երէկ պաշտօնատեղին գնաց, և իր նախագահութեամբ, Էվգաֆի և Համբային շինութեանց նախարարներէն ու ելևտական խորհրդոյ նախագահներէն յանձնաժողով մը կազմուեցաւ, և մինչև երեկոյ խորհրդակցեցան։

Լա Թուրքի գրեր էր Վարնայէն. «Քաղաքիս մէջ անցեալ շաբաթ օր երբ 100 պաշտօնաւոր ուսայք համախմբուելով, ձեռքերնին մէկ մէկ խուրձ խոտ բռնած, ազգային երգ մը երգեր, և ծանուցեր էր թէ հետևեալ օրը հասարակաց գումարում մը անցկ պիտի ունենայ։ Ալեքսանդրը, ուսանող, ժողովուրդն փողոցները ու շուկաները թափելով, ազգային երգող աղաղակներով խանութներին քաղաքը, և քաղաքապետական պաշտօնէից մէջ խանելով՝ ձեռնահասութիւններ ըրին տակաւին ծափահարութեանց և կեցցէներու ճիչերն ու բարձրաձայն ամբոխին մէջ ձեռնահասութեանց խնդիրը լուծուեցաւ։ Ժողովուրդը ցրուելէն ետքը իմացուեցաւ, որ այս գումարումը Ֆիլիպէի ու Սոֆիայի ժողովրդեան ընդդէմ էին, և թէ մեծ ամբոխութեանց համար չէին ժողովուեր, այլ ցոյցարարներն են թէ ի դէն պիտի գիտնէն եթէ իրենց կամքը չը կատարուի։

Անգլիոյ Երեսփոխանաց ժողովոյն տարին մէջ, Պ. Ճէյմս Պրայս հարցուց թէ իրաւ է որ Ամերիկեան Միսիոնարաց Փոքր Ասիոյ մէջ ունեցած դպրոցներէն մի քանին գոցուեր են տեղական իշխանութեանց ձեռամբ, և եթէ իրաւ է, հետեւեանքն ինչ եղած է։ Արտաքին գործոց խորհրդական լորտ Էտմընտ Ֆիցմորիս պատասխանեց թէ իր պաշտօնատանը ճշգրիտ տեղեկութիւն չունի ամերիկեան դպրոցաց նկատմամբ, բայց Բաղէշի մօտ Միսիոնարաց վրայ յարձակում մ'եղեր է։ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը Կ. Պոլսոյ մէջ գործակատարին շնորհակալութիւն յայտներ է Միսիոնարաց գործին մէջ բռնած ընթացքին համար, և լորտ Ֆիցմորիս եթէ Նպաստաւոր առիթ մը ներկայանայ կը խօսի եղեր բարեկարգութեանց նկատմամբ։ Պ. Ճէյմս Պրայս խնդրեր է որ նախարարութիւնն հասկընայ թէ դպրոցներու փակման լուրն հիմնաւո՞ր է, և լորտ Ֆիցմորիս խոստացեր է։

Անգլիոյ Խորհրդարանին մէջ Ամերիկեան Միսիոնարներու գործին նկատմամբ ցոյց տրուած այս հետաքրքրութիւնը զարմանալի կրնայ թըւիլ։

Բ. Դուռը Թղթատարական և հեռագրական պայմանագիր մը կնքեց Պուլկարիոյ իշխանապետութեան հետ։ Պուլկարական պատուիրակ Պ. Իվանոֆ շաբաթ օրն ստորագրեց այս պայմանագիրն, որ երկու կողման ալ նպաստաւոր է։

Այս կիրակի տեղի ունեցաւ ի Խասգիւղ, բացման հանդէսն հրէական նոր դպրոցին, զոր Քամոնտօ կոմսն հիմնեց մօտերս։

Ահմէտ Վէֆիք փաշայի որդի Ճէֆիք պէյ, որուն պատահած արկածն երէկ պատմեցինք, Էլիաս փաշայի և Տօքթօր Նաֆիլեան էֆէնտիի կողմէ դարմանուելով, ապաքինութեան ճամբու մէջ է այժմ։ Վեհ. Սուլթանն յատկապէս տեղեկութիւն խնդրեր է։

Մօնիթէօր Օթթօման կ'ըսէ թէ Նաւատորմին մէջ տեղի ունեցած հրդեհէն գոյացեալ վնասը երկու հազար հինգ հարիւր (2,500) ոսկիէն աւելի չէ, և Վեհ. Սուլթանն հրաման ըրեր է որ իր անձնական գանձէն տրուի այդ գումարը, փուռին և ջաղացքին անմիջական նորոգման համար։

Օգոստ. Սուլթանը Թէզկեաթխանէի գործարանին մէջ դպիր մը աշխատել տուեր և մարգարտով պատրաստել կուտայ Օսմանեան դահաժառանգ իշխանին ընծայելու համար։

Սուլթան Ահմէտի դամբարանին փողոցն Եղէ Համամի կատուն չորեք բերեր է, որոց մէկին եւատունի է կ'ըսէ [illegible]։

Խասէքիի Նորակառոյց հիւանդանոցին բացման հանդէսն կատարուեցաւ երէկ։ Օգոստ. Սուլթանին կողմէն, պալատան երկրորդ քարտուղար Գատրի պէյ Ներկայ էր, և բոլոր նախարարք և բարձրաստիճան պաշտօնատարք՝ որոնք հիւանդանոցին ամեն կողմերը շրջեցան։ Ճառեր և ուղերձներ կարդացուեցան և բարեմաղթութիւնք եղան Նորին Վեհափառութեան համար։ Մէճիտիէի-Խայրիէի աղքատախնամներէն վեց տարեկան օրիորդիկ մ'ալ ուղերձ մը արտասանեց։

Արշիպեղագոսի կղզեաց նորընտիր կուսակալ Հագգը փաշա անցեալ շաբաթ օրն հասնելով ի պաշտօնատեղին մեծաւ շուք ընդունուեր է տեղւոյն պաշտօնակալաց և երեւելեաց կողմանէ։ Երբ նաւահանգիստ եկեր է, թնդանօթներ արձակուեր են բերդէն, և մինչև պաշտօնատեղին զինուորք և դպրոցականք բարեւ կանգնած են եղեր։

Կէլիպօլիի ատորիական հիւպատոս Պ. Ճանօ և Սուրիոյ Նահանգին կեդրոնական կառավարիչ Իզզէթ էֆէնտի՝ երէկ մայրաքաղաքս եկան։

Անգլիական դեսպանատան գլխաւոր թարգման Պ. Սանտըսըն երէկ Բ. Դուռն երթալով՝ արտաքին գործոց նախարար Արիֆի փաշային հետ տեսնուեցաւ։

Հալէպէն Լա Թուրքիի գրուած է, թէ տեղւոյն գաղղիական հիւպատոսարանին գաւազաններէն Պիլէնեի Հասան, բաց 49 և 180 րդ. յօդուածոց պատժական կանոնագրին, Հալէպի վերաքննութեան ատեանէն դատապարտուեր է հրապարակաւ լինելու և եւամեայ շղթայակապ բանտարկութեան։

Անցեալ շաբաթ, Իտալիոյ Արտաքին գործոց նախարար Պ. Մանչինի Երեսփոխանաց ժողովոյն մէջ հարցման մը պատասխանելով, Տունիսի մասին յայտարարեց թէ Իտալիա այդ երկիր մասնաւոր շահեր չունի։ Իր շահերն ամէն քաղաքակրթեալ ազգաց շահերն են միայն։ Իտալիա պարտի առաջնորդութիւն ձեռք թէ Տունիսին իրաւ ինքնիշխանութեան վերակազմութիւն նայելոյ չի կրնար լինիլ Եգիպտոսի անկախութեան։ Եգիպտոսը պէտք չէ թողուլ մեղուանդ ցեղերու կամքին։ Իտալիոյ ջերմ փափաքն այն է որ Անգլիա յաջողի իր ձեռնարկած պաշտօնին մէջ, որ իր վրայ ծանր պատասխանատուութիւններ դրած է։

Նորագոյն տեղեկութիւնք կը հաստատեն վերջնապէս այն լուրը թէ, ռուսական դեսպանատան Նոտայով մը հաղորդած է Բ. Դրան, ծանուցանելով թէ Ռուս կառավարութիւնը կը հաւանի Սէյէտ փաշայի կառավարչական պաշտօնին վերանորոգման։

Աթէնքէն կը հեռագրեն Նէոլոգոս լրագրոյ.

«Եգիպտոսի կողմէ Ցունաստանի և Անգլիոյ հետ կնքուած առևտրական դաշնագրոյ դէմ Օսմ. կառավարութեան գլխաւոր առարկութիւնք ուղղեալ են այն յօդուածին դէմ, որ «ամենէն աւելի նպաստաւորեալ ազգի» մաքսային դրութիւնը կուտայ Եգիպտոսի, մինչդեռ Բ. Դուռը կը ըսէ թէ Եգիպտոսի վաճառականութեան վերաբերեալ պաշտօնականութիւնք Թուրքիոյ կը վերաբերին։

«Ծխախոտի մենաշնորհի խնդիրը կը վերաբերի նաև Եգիպտոսին, մանաւանդ դաշնագրին երկրորդ յօդուած, որ Եգիպտոսի կը վերապահէ ծխախոտին տուրք առնելու բացարձակ իրաւունքը։ Վերջապէս, Բ. Դուռը կը յայտարարէ թէ Եգիպտական կառավարութեան կնքած այս դաշնագիրը դժուարութիւն կը հանէ Օսմ. կառավարութեան և անբաւելութեանց մինչև տեղի ունեցող առևտրական բանակցութեանց։

Երուսաղէմէն կը գրեն մեզ մարտ 24 թուով.

«Շաբթուս մէջ Ցոփպէ ժամանեց Ալեքսանդրիայէն՝ [illegible] ամերիկեան մարտանաւն, որոյ մէջ կը գտնուէին 440 զօրք և 10 թնդանօթ։ Նոյնպէս Բոր Սայիտէն Ցոփպէ ժամանեց ամերիկեան [illegible] մարտանաւն 244 զօրքով և 7 թնդանօթով։ Այս մարտանաւերուն հրամանատար ծովակալ Պ. Պալտին մարտ 22ին յետմիջօրէի ժամանեց իր պարագայիւք։ Տեղւոյս ամերիկեան հիւպատոս Պ. Մէրիլ Սէլահ՝ ծովակալը դիմաւորելու գնաց։ Նաւաստիք խումբ խումբ առաւ կուգան։

«Մարտ 10ին, երկու Ցոյն պատանիք արբենալով կռուի բռնուեցան, և մին միւսին դանակով։ Երկուքն ալ այժմ բժշկանոցին կը դարմանուին։ Ոճրագործը բանտարկուեցաւ։»

Թօյմս լրագրոյն Կ. Պոլսոյ թղթակիցը կը հեռագրէ ապրիլ 3 թուով թէ, Արեւելեան Ռումելիի մէջ տեղի ունեցող յուզման անմիջական շարժառիթն է Բ. Դրան մերժողական պատասխանն, որով չընդունիր Արեւելեան Ռումելիի Նահանգային ժողովոյն այն որոշումն որ Նահանգին կողմէ Բ. Դրան հատուցանելիք տարեկան տուրքն 240,000 ոսկիէն 180,000 ոսկւոյ կ'իջեցնէր։ Մինչդեռ Բ. Դուռն 240,000 ոսկւոյ ծըլւելու վճարումն կը պահանջէ, Նահանգին բիւջէն մէջ բաւական եղելոյ թէ Նահանգին նիւթական վիճակը չներեր։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Երէկ երեկոյ հրատարակած Յաւելուածնիս փոքր ինչ ընդլայնմամբ կրկին կը հրատարակենք։

Ժամը 4 ½ին ատեններ երեսփոխանք հաւաքուեցան Պատրիարքարանի մեծ սրահին մէջ, և մեծագոյն մասամբ ուրիշ նուազ թւով Գալաթիոյ Քրիստոստուր էֆէնտիի կողմանէ ժողովոյն յետաձգման յայտարարութեան խնդրոյն քննութիւնը, քննութեան նորա մեծամասնութեամբ նիստը բացւէր։ Ատենը բացուեցաւ 5ին, նախագահութեամբ Սեֆերեան Տ. Սիմոն Սրբազանի։ Ներկայ էին 400էն աւելի Երեսփոխանք, և թէպէտ բազմութիւն ժողովրդեան եկեղեցեաց մէջ և դուրսը խռներ էր, սակայն ոչ ոք Պատրիարքարան կը մտնէր, և նիստը դռնփակ էր։

Կաթողիկոսական Ցանձնաժողովոյ կողմանէ ատենախօսը Տ. Խորէն Սրբազան Նար-Պէյ խօսք առնելով՝ հանճառեց անցեալ Ցանձնաժողովին աշխատութեանց պատմութիւնը, և ծանոյց թէ Ցանձնաժողովոյ մեծամասնութիւնն նկատելով 1866ի ընտրական եղանակին պատմութեան, արդարութեան և Սահմանադրութեան բարերը հանճառոյն չը մտնելն, որոշած է առաջարկել Ազգային ժողովոյ, որ այս անգամ Ազգային ժողովն ընտրէ երեք կաթողիկոսացու անուանքն իրենց քուէից առաւելութեան կարգաւ ստորագրեալ մը մեկնեաց Ս. Պատրիարքին կողմանէ հաղորդուեցին Ս. Էջմիածնի, և անոր Ռուսիոյ և այլ տեղեաց պատգամաւորաց քուէարկութեան վրայ առաւելագոյն քուէ առնողը լինի կաթողիկոս ամենայն Հայոց։ Կարդաց ռուսական դեսպանատան առաջին թարգման Պ. Իվանովի կողմանէ բառած խօսքերն, և բառ թէ Ցանձնաժողովն իր որոշման արդէն գրած էր, երբ դեսպանատան յայտարարութիւնն հասաւ ի գիտնոց ամեաթեան Ռուսիոյ։ Կարդաց նաև Ս. Էջմիածնի Սինոդականաց և Միաբանից ամէնց հեռագիրն, որով ծանուցուած է թէ համոզուած են 1866ի ընտրական եղանակին համար Ազգ. ժողովոյ կողմանէ գրուած պաշտօնագրութեանց, թէ Սինոդին գիրն բարի գիտաւորութեամբ գրուած է, և թէ կը փափագին որ Ազգ. ժողովը փութայնէ ընտրութիւնը, և ընդհանուր Ազգին փափագն ալ ու սիրելագոյն լինի Կաթողիկոս։ Տէրվիշեան Սրբազանն երկարօրէն խօսեցաւ և ջանաց հաստատել որ Ազգ. Ժողովն ընդունի Ցանձնաժողովոյն առաջարկութիւնը, վստահելով Ցանձնաժողովոյ անկեղծութեան վրայ։

Բազում երեսփոխանք յաճախ կ'ընդմիջէին, և յաճախ կը յուզուէր ժողովն, և այլ և այլ նստարաններէ խօսք կ'ուղղուէր։

Պէրպէրեան էֆէնտի ցոյց յայտնեց, որ 1866ի ընտրութեան դէմ կ'ելնէ այժմ Ցանձնաժողովն, և կը ջանայ պատմութեան, իրաւանց ու Սահմանադրութեան անհամաձայն հաշւել զայն, մինչդեռ երկու բառ այնժամ մանաւանդ է Ազգ. Ժողովն, և ներկային համար նոյն եղանակին գործադրութիւնն որոշած է, և մինչդեռ ներկայ Կաթող. Ցանձնաժողովն ալ մինչև մօտ օրերս զնոյն պահպանած պաշտպանած է։ Ցոյց յայտնեց, որ Ցանձնաժողովն իր նոր առաջարկութեամբ, Ազգ. Ժողովն ընտրելոյ ցանկ առաւ մարմին մը կը դարձնէ։ Առաջարկեց Պէրպէրեան էֆէնտի չընդունիլ Ցանձնաժողովոյ առաջարկութիւնը, և վարուիլ ըստ 1866ի, և կամ իբրև ընտրող ժողով՝ ուղղակի մասնակցիլ ընտրութեան, մէկ անձի համար կաթողիկոսական քուէ տալով։

Ջէրազ էֆէնտի Կաթողիկոսական յանձնաժողովոյ մեծամասնութեան առաջարկութիւնը պաշտպանեց առանձին ջերմութեամբ, Տփղիսի ազգային լրագրաց ամենց գրածներն և մանաւոր Թղթակցութեանց հատուածներ կարդալով ի հաստատութիւն իր խօսքերուն, որոց դէմ բողոքեց բարձրաձայն Փափազեան էֆէնտի և այլք։ Ջէրազ էֆէնտի անկրաւութիւն կ'ըսէր, որ այս անուն Եպիսկոպոսն 54 և այն անուն Եպիսկոպոսն 56 քուէ չունի Ազգային ժողովոյ կողմանէ, և ի Ռուսաստան 56 քուէից վրայ բարդէին 54 քուէներն ալ։

Թէօտորեան էֆէնտի երբ միասնական դէմ խօսէր առաջարկութեան Ցանձնաժողովոյն, երեսփոխանաց մէկ մասն դուրս ելան խորհրդարանէն, և այլք դադար տալ առաջարկեցին։

10 վայրկեան դադարէ յետոյ, Իգդիլեան Մուրատ. Սէրվէրեան դէմ խօսեցաւ Ցանձնաժողովոյ մեծամասնութեան առաջարկին, և բազում առարկութիւններէ և փաստերէ յետոյ, ուրիշ միապաղաղ Ցանձնաժողովոյ մեծամասնութեան առաջարկութիւնը, ներկայացուց գիր մը՝ որ Տփղիսէն Հայազգի նշանաւոր գրագէտներէ, վաճառականաց և այլ ծանօթից կողմանէ ուղղեալ է առ Ցանձնաժողովն, որով կը հաւանէին Թուրքիոյ Հայոց ընտրութեան եղանակ, և Տ. Մակար սրբազանի ձեռնհասութիւնն ու Տ. Ներսէս սրբազանի հիւանդութիւնը յիշելով, Վեհափառ Տ. Ցարութիւն սրբազան ընտրելի նշանակուած է։

Այս պահուն, խորհրդարանին մէջ լուր եկաւ թէ ժողովրդեան անհամբերութեան ցոյցեր կըլլան, և հարկ է Մայր եկեղեցի իջնել և դռները բանալ։ Եկեղեցական Հայոց ամենքը իջան ի յորդորել և պարզաճառ ծանուցին թէ ժողովուրդն հանդարտած է։ Սակայն ամէն մի յետոյ, վերստին եկեղեցի իջնելու յորդորելով բառեցան, և վերջապէս, քիչ մ'ալ վիճաբանելէ, և փոքր ի շատէ հանդարտութեան միաձայնելէ ետք վիճաբանութիւնը փակելով իջան ի Մայր եկեղեցի ժամը 8½։

Եկեղեցւոյ մէջ ատեանը բացուեցաւ ի ներկայութեան 3-4000 ժողովրդեան։ Եկեղեցական Հայք «Լուսով Առատութեանն» շարականը երգեցին, և ձայնակցեցան ամբողջական երեսփոխանք և ժողովուրդն։ Առաջ խօսք առնելով Թէօտորեան էֆէնտի, Ցանձնաժողովոյ առաջարկութեան վրայ բոլոր երկու բարեփոխումն առաջարկեց, որ խոստովանիր երեսփոխանն միայն մէկ եկեղեցականի համար քուէ տայ, բայց առաւելագոյն քուէ առնողներէն երեք անունք Էջմիածին հաղորդուին։ Պէրպէրեան և Մինաս Ջէրազ էֆէնտիներն ալ առաջարկութիւններ ըրին, որոց առաջինը բաւական կ'ընծայէր Թէօտորեան էֆէնտիի առաջարկին, և երկրորդը գրեթէ կ'ընծայէր Ցանձնաժողովոյ առաջարկութիւնը։ Փափազեան էֆէնտի ալ առաջարկեց ընտրութիւն ձգել այսօր, և Սինոդին և Ռուսիոյ կառավարութեան հետ համաձայնիլ կամաւ։ Թէօտորեան էֆէնտի ալ առաջարկեց անփոփոխ պահել և գործադրել, 1866ի եղանակը, որ ժողովէն ընդունուած և գործադրուած է։

Փափազեան էֆէնտի ալ առաջարկութիւն մ'ունէր, սակայն երեսփոխանաց բազմաց քուէ՛ քուէ՛ աղաղակաց վրայ, Դիւանը առաջարկեցաւ ի քուէարկութիւն հրաւիրել երեսփոխանները, և որովհետև շփոթութիւն կը տիրէր, անուանական քուէարկութիւն լինելով՝ Կաթող. Ցանձնաժողովոյ առաջարկութիւնն ընդունուեցաւ 30 ձայնի դէմ 63 ձայնով և 8 ձեռնպահով։ Ջէրազ էֆ. եւս առաւել առաջարկութիւնը, իսկ Թէօտորեան և Պէրպէրեան էֆէնտիներու առաջարկեալ բարեփոխմանց քուէ չընդունեցան։

Ետն սրահին, Ատենապետ էֆ. ծանոյց, թէ 7300 ստորագրութեամբ հանրագիր մը յանձնուած է Դիւանին, որով կ'ենդրեն Կաթողիկոսական երեք ընտրելեաց մէջ Ամեն. Տ. Խրիմեան սրբազանի անունն ալ նշանակել։ Այս հանրագիրը բարձրաձայն կարդաց Արշակունի Ցոլէնճեան էֆէնտի, որ բոլորեւէ ատենադպիր էֆէնտիին յոգնած էր։ Երկար և բուռն ծափահարութիւն եղաւ երեսփոխանաց և ժողովրդեան կողմանէ, և Տ. Մկրտեան Հայոց «Շնորհակալութիւն Վանեցւոց» գոչեց։ Այս հանրագրոյն բազմաթիւ ուրիշ օրինակներն, նոյն պահուն ցրուեցան երեսփոխանաց և ժողովրդեան մէջ, և այս ցրուման ալ ոչ առաւ շփոթութեան և անկարգ պատճառ եղաւ։

Ապա բոլոր երեսփոխանք, գլխաւորութեամբ և յաւելեալ, երգ կ'երգէին «Էջմիածին ի Հօրէ» շարականը, և Եկեղեցական Համագումար ժողովոյ կողմանէ խօսն կաթողիկոսացուաց համար կատարուած ընտրութեան ստեղծագրին կարդացուեցաւ յորում Ամեն. Ս. Պատրիարք Հայոց դարձեալ խնդրած էր որ իր անունն ընտրելեաց ցանկէն ջնջէին։ — Այն միջոցին բաւական յուզմունք տիրեց ժողովրդեան մէջ, առանց նպատակը յայտնի լինելոյ, և հազիւ հանդարտութիւն վերահաստատելով, և քուէարկութիւն կատարելով, սա արդիւնքն ունեցաւ.

ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔ	62 քուէ	
ԽՐԻՄԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ.	50	
ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԵՊԻՍԿ.	42	չորս
Աշըգեան Եպիսկ.	48	
Մատթէոս »	46	
Մակար Տեղապահ	15	»
Եսայի Պատրիարք	9	»

Ներկայ երեսփոխանք 401 էին, սակայն Կ. Փանոսեան ձեռնպահ մնաց, և Ս. Փափազեան քուէարկութեան միջոցին մեկնած էր. փոխանակ Երուսաղէմայ Պատրիարքին և Աղթամարայ Կաթողիկոսին՝ իրենց փոխանորդներն քուէարկեցին և քուէից թիւը մնաց 401, յորոց մին բացակայ թուղթ լինելով, քուէարկուաց ճիշդ թիւը 400 եղաւ։

Քուէհամարի ատեն բարձրաձայն հաղորդուեցաւ ժողովրդեան, որ երկար և ուժգին ծափահարութեամբ ընդունեցաւ զայն, և կեցցէ՛ Սուլթան Համիտ, կեցցէ՛ Ներսէս Պատրիարք, կեցցէ՛ Խրիմեան Հայրիկ, կեցցէ՛ Մելքիսեդեկ սրբազան, կեցցէ՛ Երեսփոխանութիւն աղաղակներով կամաց կամաց եկեղեցւոյն և Պատրիարքարանէն և մերձակայ փողոցներէն մեկնեցան։

Բանաձեւ առաջարկեալ ի Կաթողիկոսական Ցանձնաժողովոյ առ Ազգային ժողով

Ազգային Երեսփ. ժողովն Հայոց Տաճկահայաստանեայց ի մէջ ցանկի քուէարկելոյ նախապէս ի Համագումար Եկեղեցական ժողովոյ Հայոց Թուրքիոյ, յանուն առաջնորդական վիճակացն եղելոց ընդ իրաւասութեամբ Պատրիարքութեան Կ. Պոլսոյ, կ'ընտրէ միայն քուէարկութեամբ 3 ընտրելի եպիսկոպոս ի Կաթողիկոսութիւն ամենայն Հայոց։

Այս եռանուն պատրաստեալ անուանց ցանկն կը դասաւորուի ըստ թուոյ քուէից, և առաջին անուան խոստովանական ընտրելոյն կը նշանակուի թիւ քուէիցն զոր առաւ։

Եկեղեցին Հայոց որ ի Տաճկաստան կամ ըստ որում կազմէ զմեծամասնութիւն ազգին Հայոց, պահանջած է և կը պահանջէ իրաւամբ որ իր եռանուն ցանկն առաջնայաւէ և նշանակութեամբ քուէից ընտրելեացն, մանաւանդ ի քուէտուփն քուէարկութեան որ կը կատարուի ի Կաթողիկէ տաճարի Սրբոյ Էջմիածնի։

Այս ընտրելին որոյ յԱզգային ժողովն առաջած քուէից վերայ բարդուելով Ռուսաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոցն քուէարկութեան պատշաճաւորութեան քուէից, նա է ընտրեալ Հայրապետն և Կաթողիկոս ամենայն Հայոց։

Պատրիարքն Կ. Պոլսոյ պատրաստեալ դեսպանն ցանկ ընտրելեաց հաղորդէ առ Տեղապահն Արարատեան Մայր Աթոռոյ ի ձեռն ուղղակի պատուիրակի, առաջ նմա պաշտօն ներկայ գտանիլ և ընտրական գործողութեանց՝ վերոյիշեալ պայմանաց մէջ, մասնակցիլ յանուն Հայոց Տաճկաստանի։

Ահա ասոնք Կաթողիկոսական Ցանձնաժողովոյ բանաձեւին վրայ թէր ու դէմ քուէ տուող, և ձեռնպահ մնացող երեսփոխանաց անուանքն (ներկայութեան տոմարին կարգաւ։)

Բանաձեւն ընդունողք։

Տ. Սիմէոն Եպիսկ. Սէֆերեան — Տ. Խորէն Արքեպիսկ. Նարպէյ — Տ. Յովհ. քհնյ. Միրեան — Տ. Գրիգոր քհնյ. Ահճեմեան — Տ. Եղիշէ վրդ. Այվազեան. — Տ. Սահակ քհնյ. Տ. Սարգսեան — Տ. Յովսէփ վրդ. Այվազեան — Տ. Գարեգին վրդ. Թաշճեան — Տ. Գաբրիէլ քհնյ. Խանճեան — Գ. Պէրպէրեան էֆ. — Կ. Ալլահվերդեան էֆ. — Բ. Փիրղալեմեան էֆ. — Գ. Ասլանեան էֆ. — Տ. Հիւնքեարպէյէնտեան էֆ. — Ն. Այվազեան էֆ. — Խ. Կամսարական էֆ. — Մ. Ինճեան էֆ. — Մ. Էքսերճեան էֆ. — Մ. Պէշիկլեան էֆ. — Գ. Հալաճեան էֆ. Յ. Քէրէսթէճեան էֆ. — Մ. Գարոնիկեան էֆ. — Մ. Ֆրէնկեան էֆ. — Պ. Էքսերճեան էֆ. — Գ. Գասպարեան էֆ. — Յ. Հանեան էֆ. — Գ. Ջերրահ էֆ. — Գ. Սիլիֆիճեան էֆ. — Պ. Հոփեան էֆ. — Ն. Պոյաճեան էֆ. — Վ. Օրմանեան էֆ. — Հ. Մոսդիչեան էֆ. — Տ. Կիւմիւշկէրտանեան էֆ. — Տ. Նաւասարդեան էֆ. — Մ. Գազանճեան էֆ. — Մ. Ճանիկեան էֆ. — Պ. Շիշմանեան էֆ. — Ս. Պէյ Մաքսուտ — Գ. Ցովակիմեան էֆ. — Կ. Հագոպեան էֆ. — Մ. Ցէօքմէնեան էֆ. — Կ. Սրմաքեան էֆ. — Մ. [illegible] Ծրէկեան էֆ. — Մ. Ջերրահ էֆ. — Ց. Նուրեան էֆ. [illegible] էֆ. — Յ. Սրմաքեան էֆ. [illegible] էֆ. — Գ. Գադրոս[illegible] — Գ. Գազազեան[illegible] Արզումանեան էֆ. — Պ. Պալյան[illegible] էֆ. —

[illegible]

[illegible] էֆ. — Կ. Իւթիւճեան — [illegible] էֆ. — Յ. Աղէքսեր էֆ. — Ն. [illegible] ն էֆ. — Մ. Փօլօլեան էֆ. — Ն. [illegible] էֆ. — Մ. Չօպանեան էֆ. — [illegible] Քէնկեան էֆ. — Պ. Պալըգեան էֆ.

Սոյն բանաձեւը չընդունողք.

Տ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան — Տ. Կարապետ վարդապետ Բաղրատունի — Տ. Վահան վարդապետ Տ. Մինասեան — Տ. Կարապետ քահանայ Սեթեան — Տ. Խորէն քահանայ Բէշիկթաշլեան — Տէր Ռոփէ քահանայ — Տ. Յովհաննէս վարդապետ Արշարունի — Տ. Թիրեաքեան էֆ. Յ. Նէմնէճեան էֆ. — Տ. [illegible] էֆ. Յ. Անդրէասեան էֆ. — Պ. Թօրգոմեան էֆ. — Տ. Փափազեան էֆ. — Յ. Պէկեան էֆ. — Մ. Մեզպուրեան էֆ. — Պ. Թաղէոսեան էֆ. — Կ. Փանոսեան էֆ. — Ն. Թիւրպենտճեան էֆ. — Ա. Թիւլպէրեան էֆ. — Յ. Պալաբանեան էֆ. — Կ. Երէցեան էֆ. — Բ. Ղազարոսեան էֆ. — Յ. Իւթիւճեան էֆ. — Պ. Պէրպէրեան էֆ. — Ս. Փափազեան էֆ. — Յ. Չէրքեզեան էֆ. — Մ. Մելքոնեան էֆ. — Մ. Այվազեան էֆ. — Գ. Վարդանեան էֆ. — Մ. Մանուկեան էֆ.։

Ձեռնպահք

Տ. Յակոբ վրդ. Փափազեան — Յ. Պօղոսեան էֆ. — Ս. Ցէքիեան էֆ. — Գ. Նորատունկեան էֆ. — Յ. Թոսունեան էֆ. — Յ. Պօռեան էֆ. — Հ. Ս. Աբրահամեան էֆ. — Ն. Դաւրադեան էֆ.

Երէկուան նստին բացակայ գտնուող Երեսփոխանաց անուանքն են.

Ցարութիւն	էֆ.	Մէրմէրճեան
Միհրան	»	Պաղտասարեան
Մանուկ	»	Ալլահեան
Ցակոբ	Պէյ	Խանտամեան
Կարապետ	էֆ.	Կիւրճեան
Աբրահամ	»	Մուրատեան

Իսկ երեք Երեսփոխանք, Ստեփան էֆ. Ապարճեան, Աւետիս էֆ. Ստեփանեան և Գէորգ էֆ. Այվազեան Պոլսէ դուրս գտնուած են։

Կը լսենք թէ երէկուան ժողովոյ արդիւնքն հաղորդուած է Ս. Էջմիածնայ Սինոդին՝ ընդարձակ հեռագրով։

Արեւելքի տնօրէնութիւն յատկապէս շնորհակալութիւն կը մատուցանէ ազգային Վարչութեան Քաղաքական ժողովոյ ատենապետ Մաղասեան Վսեմ. Սիմոն պէյի, երէկ Ազգային ժողովոյ և ժողովրդեան մէջ հանդարտութիւնն ու բարեկարգութիւնը անվրդով պահելու համար ձեռք առած միջոցներուն պատճառաւ։

ՊԱՏՃԷՆ ՀԱՆՐԱԳՐՈՒԹԵԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ
ԱՄԵՆԱՊԱՏԻՒ
ԽՐԻՄԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ

Տէր Ատենապետ

Ազգային Երեսփոխանական Պատկառելի ժողովոյ.

Նկատելով որ, այսօր Պատկառելի Երեսփոխանական ժողովը մեծ և ամենակարեւոր կոչման մը ենթակայ կը գտնուի՝ երրեակ թւով ցանկ մը պատրաստել յընտրութիւն Կաթողիկոսի Արարատեան Մայր-Աթոռոյ։

Նկատելով որ, արդարեւ արժանաւոր Կաթողիկոսի ընտրութիւնն Ազգային իրաւանց զօրութեամբ ոչ միայն Սրբազան պարտաւորութիւն է՝ այլ և հաւատարմանալի երաշխաւորութիւն մը, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ օրինաց և իրաւանց անվթար պահպանութեանը, զի ինքն Կաթողիկոսն է և իւրն է Կաթողիկոսն։

Նկատելով որ Խրիմեան Ամենապատիւ Տ. Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոսն եւս օժտեալ է Կաթողիկոսական արժանաւորել ձիրքերով հանդերձ [illegible] վան զի [illegible] Խրիմեանի ժողովրդականութիւնն անուրանալի է իւր Սնապատական Բաբելոնոց ձայնին մէջ. զի Խրիմեանն քրիստոնէավայել մարդասիրութիւնն՝ ինչպէս ի բաղում տեղիս, նոյնպէս և ի Հայաստան ի ժամանակս սովու՝ առանց բնաւին ազգի խտրութեան չնաշխարհիկ անձնուիրութեամբ հռչակ եառ ի համօրէն աշխարհս ։

Խրիմեանի եկեղեցականութիւնն անստուեր կը փայլի իւր նախանձելի գործոցը մէջ, որ բեմական ճարտարախօս վարդապետութեան հետ լծորդելով իւր Աստուածախօս գրիչն՝ արի զինուորին նման չէ դադրած Եկեղեցւոյ օրինաց և իրաւանց անվեհեր պաշտպանութեանը հսկել ։

Խրիմեանի գրականութիւնը Հայաստանի մենաստան խորշերուն մէջ աւանդման և տպագրական արուեստ, Նոր լոյս, և Նոր յոյս սփռեց, և խոպան վայրերին ջրտանք մշակելով, դառնաթախծալից սրտեր, և ուսեալ մտքեր պատրաստեց և զօրացուց ծառերէ քաղաքակրթեալ ժողովուրդ ընծայելով՝ ընծայեց Տէրութեան և Ազգին ։

Վերջապէս Խրիմեանի Պատրիարքութիւնն և պաշտօնականութիւնը՝ որոց մէջն հաւատարիմ մնաց, հաւաստիք են իւր բարձր ձրից որ իրաւամբ արժանի կը համարուին զինքն Կաթողիկոսական բարձր գահուն ։

Ի վերայ այսր ամենայնի նկատելով որ Երեսփոխանութիւնը ժողովրդական ձայնից հաւաքական ամփոփումն է, որ սրբազան կոչումն ունի ներկայել նոյն իսկ ժողովրդեան կամքն և ձայն, և զանի պաշտպանել իւր իրաւանց սահմանին մէջ ։

Եւ միանգամայն նկատելով որ, թէպէտ ժողովուրդ իւր Երեսփոխանին հետ քուէ չունի, բայց փոխանորդողի իրաւանց անբաժանորդելի ձայնն ունի, որ Աստուծոյ ձայնն է, վասն զի բազմաց ձայն է, և աներկբայ կը հաւաստյ թէ Պատկառելի ժողովը իւր ժողովրդասէր զգացմամբն՝ որ կենդանացուցիչ ոգին է Ազգային Սահմանադրութեան, մեր ձայնով եկած Աստուծոյ ձայնին որ հեռի է ամէն անձնական նկատումներէ՝ միմիայն Ազգային շահուց նախանձախնդրութեամբ կուգայ խոնարհաբար խնդրել, որ բարեհաճի իւր քուէովն, ինչպէս որ ալ կը հաւատանք իրենց արժանաւորն ու փորձառութեամբ համբաւանոյշ Կաթողիկոսական ընտրելեաց հետ Ամեն. Խրիմեան Սրբազանի անունն ևս նշանակել, դասելով իւր արժանիքն [illegible] մեր ամենուս փափաք ։ Եւ այս նշանաւոր պարագայիս մէջ արդեամբք ցուցնել թէ Երեսփոխանական Ազգ. ժողովն արդարև Ազգին շահուց ճշմարտապէս նախանձախնդիր կը հանդիսանայ, և համակրական սիրով կը յարգէ ժողովրդեան օրինաւոր, իրաւացի և արդար պահանջն՝ յաւէտ երախտապարտ կացուցանելով Մեծ. Տեառնդ և Պատկառելի Ժողովոյդ ։

Մնամք ամենայն յարգանօք
Ստորագրութիւնք, 7,500

1884 Մարտ 30 Կ. Պոլիս

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱԶԳ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

Իւսկիւտար Ս. Կարապետ եկեղեցւոյ [illegible] եկեղեցւոյ կրկին հաշուեցոյցերն՝ ուրկէ 1882 Յունուար 1 էն սկսելով՝ կը յանձնուին ցմինչ դեկտեմբերի 1883 տարւոյ, [illegible] օրինի Տնտեսական Խորհրդոյ ներ[illegible] և անոնց յոր և նման օրինակութեանց [illegible] ազգային Խորհրդոյ յուղարկելով [illegible] համար պտուած է որ եկեղեցականց [illegible] ի ձեռս թողելոց ։ [illegible] էնք, և յատկապէս Տնտեսական Խորհուրդն Չարկել որ [illegible] ծանուցմամբ կը [illegible] ժողով գիտաղեցի ազգայինս, որ իրենց [illegible] ի եկեղեցւոյն վերաբերեալ հաշուեհարցակաց վրայ որ և է բողոք կամ դիտողութիւն եթէ ունին, ներկայ ծանուցմանս թուականէն մինչև 21 օր պայմանաժամու փութան գրաւոր կերպիւ ներկայացնել Տնտես. Խորհրդոյ ։

Սոյն պայմանաժամէն յանայն յետոյ որևէ բողոք կամ դիտողութիւն անընդունելի պիտի մնայ ։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

[illegible]

ԱԺԱՆՍ ՌԷՕԳԵՐ

Պէրլին, 14 ապրիլ.

[illegible] լրագիրք կը ծանուցանեն [illegible] բոլորովին ապաքինած ըլլալով [illegible] ունեցած հարբուխէն, [illegible] չելլեր ։

Պէրլին, 14 ապրիլ.

[illegible] կը ծանուցանէ թէ [illegible] ռուսական նոր փոխառութիւն մը կնքուած է եւրոպական դրամատեղց [illegible] ոմի մը (գօնդօլօ) հետ ։ Փոխառութեան քանակութիւնն է տասն և հինգ միլիոն անգլ. ոսկի 100ին 5 տոկոսով ։

ԴՐԱՄԱԿԱՆ

ԳԱԼԱԹԻՈՅ ՊՕՐՍԱ

Ղալաթիա, 3 Ապրիլ

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Օսմանեան Փօնսօլիտէ

Երէկ երեկոյ գոցուեցաւ ....ղհկ.		10	21
Փօրսային գոցուելէն վերջը	«	10	21
Երէկ Բերայի մէջ		10	16
Առաւօտուն բացուեցաւ	«	10	13
Բարձրագոյն գին	«	10	13
Նուազագոյն	«	10	13
Կէս օրին	«	—	
Փոխառութիւն 1863 ....Ֆր.		63	
» 1865	«	58	
» 1869	«	51	
» 1873	«	46 1/2	
Պօն տիւ Թրէզօր ..... Անգլ. լիրա		18 1/5	
Ռումէլի երկաթուղի .....Ֆր.		50 1/4	
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ	»	375	

ԲԱԺՆԵՏՈՄՍԻ

Սօսիէթէ Ժէնէրալ .... Անգ. ոսկի		4	8
Քրէտի Ժէնէրալ ...... Օսմ. լիրա		7	22
Պանք տը Բօնս	« «	6	15
Սօս. Շահմէ է վառ ...	« «	3	36
Թրամուէյ	« «	2	90
Նէօ Փիէ. Եգիպտական		75	20
Երէկ իրիկուան գոցուեցաւ		—	
Գիշերը գործ չեղաւ		—	—
Այս առաւ. բացուեցաւ ..		74	20
Կէս օրին նոյն գին		—	

Ընթացք դրամոց

Օսմ. ոսկի .... ղր.		100	—
20 Ֆրանքնոց	«	87	24
Անգղ. ոսկի	«	110	8
Ֆրիմից	«	51 1/4	
Բօլ Իմփերիալ	«	90	8
Ռուսի Թղթադրամ	»	8	88
Թալեր	«	19	13
Ֆիօրին	«	9	05
Մէճ. արծ. (տարր.)	«	108 1/4	
Հինգնոց	«	102 1/2	
Մէթալիք	«	100 1/2	
Պէշլիք	«	800	—
Թղթադրամ	«	1600	—
Վէկսէլ յ..	«	102	35

(ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ)

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՕՐՍԱ

Լօնտրա 14 Ապրիլ ժամ 3 վ. 15 երեկոյ

Փօրսան գոց է.

Բարիզ 14 Ապրիլ ժ. 3 վ. 45 երեկոյ

Ֆր. Ռանթ 4 1/2 % ..... բաց	108	22 1/2
« « 3 % բաց	77	12 1/2
Օսմ. Փօնս. բացուեցաւ	9	45
« « գոցուեցաւ քրն. կտ.	9	39
Օսմ. փոխառութիւն 1863	—	—
« « 1865	58	—
« « 1869	52	—
« « 1873	47	—
Օսմ. Երկաթուղի	50	50
Պանք Օթօման	692	50
Քրէտի Լիոնէ (բարձրացած)	575	
» Ֆօնսիէ	1297	50
Բաժնետան Լիոնի	1267	50
Սուէզի ջրանցք	2040	
Ռուսական 5% 1877ի	96	3/4
Իտալական Ռանթ	94	75
Արև. Ռուս. (Իլիս Օրիան.)	—	—
Եգիպտական միաց. գոց	345	
Սպանիական (արտաքին)	61	1/8
Հունգարական (ոսկի) (քր. կտ.)	103	
6 % Հելլենական	423	75
Չէք Լօնտրայի վրայ	25	21

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՕՐՍ

12 Ապրիլ ժ. 10 վ. 15 երեկոյ
(Պօրսան գոց է)

ՄԵՏԷՕՐԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԱՆ Ի ԲԵՐԱ

15 Ապրիլ (Ն. Տ.)

			ժ.	վ.
Ծագումն արեգական (Աւերոպ.)			5	22
Մուտք « «			6	38
Կէս օր (Միջին ժամով) . .		11	59	53
Կէս օր (ժամ. ըստ տաճկաց)			5	15
Ծագումն լուսնի (Աւերոպ.)	Ե		11	12
Մուտք « «	Ա		8	22

Երևումն լուսնի . Վ. Ք. 18 Ապրիլ.

Առաւօտեան ժամը 8 ին

	Հարդմեթր
Ծանրաչափ (Ծովու երես) . . .	758. 6
Ջերմաչափ	13. 9
Նուազագոյն աստիճան	6. 4
Բարձրագոյն « իրիկուան	18. 1
Խոնաւութիւն 0/0	60
Բարձրութիւն անձրևի 24 ժամու միջոցին . . հազարորդամեթր	0

Ուղղութիւն հովոյ, արև. հարաւ. արև. յոյժ տկար ։

ԱՊՐԻԼ 14ԻՆ ՎԻՃԱԿԸ

Ծանրաչափն իջած է Ադրիատիկանի վրայ. հովը փոփոխական և տկար է Արշիպեղագոսի և Ադրիականի վրայ ։ Հանդարտ օդ ի Ցարտանէլ և յՕտեսա ։ Բարեխառնութիւնն է 9 աստիճան ի Վիէննա, 8 յՕտեսա, և զէրօէն 3 աստիճան վար ի Բեդրբուրկ ։

ԳԻՏԱԿԱՆ

ՏԻՄԱ

Մարտի ամիսը մինչև որ լրացաւ Արևելքի մէջ Քաղաքական թէ Ազգային, Ներքին թէ Արտաքին, Հեռագիրը թէ Թղթաբերը ամեն դլուխներ չդադրեցան մահեր գուժելէ. միայն Գիտականը զերծ կը թուէր այս տխուր պարտականութենէն և ահա, անցեալ շաբաթ օր, հեռագիրը ծանուցց Ֆրանսայի տիեզերածանօթ [illegible] Պ. Տիւմայի մահը ։

Տիեզերածանօթ Տիւման անծանօթ է Հայ ժողովրդեան համար. արդեն և (ներողութիւն այս խիստ բայց ճշմարիտ դիտողութեանս) մենք բոլորովին անտեղեակ կ'ապրինք գիտական ամէն բաներէն և մեր թերթերն ու գրեանք շատ ու շատ եւրոպական վիպասանները անուններ ծանօթացուցած են ու չենք ճանչնար ոչ ոք, ի բաց առեալ Նիւտոնի բնաւանօք անդամներ, գիտնական մը, գինուորական մի քանի հռչակ ունեցող մարդիկ և դրագէտք, և առանցմէ ալ յառաջիններէն կան մեզ անծանօթք ։ Անգղիոյ թագուհւոյն որդւոյն մահը կրնար մեզ ցաւ պատճառել, բայց Պ. Տիւմայի մահը համայն ազգութեան սուգ պէտք է պատճառէ, ինչու որ այս մարդը իւր գիւտերովը այնքան բարիք բրած է որքան տասնաւոր կայսերք միացած ։

Զանիմ ամենահարկաւոր տարրերն Պ. Տիւմայի կենսագրութիւնն ընելու, որն որ անշուշտ պիտի առանձնք յառաջիկայ թղթերով ։ Սակայն պարտ անձին կը համարիմ այս առթիւ ճանչցնել մեր ընթերցողաց, այս ութսուններեք տարուան անխոնջ աշխատասիրութեամբ և բուռն ազգասիրութեամբ լի կենաց նկարագիրը որ մեր երիտասարդութեան ևս ինչպէս ամեն ազգերու երիտասարդութեանց ՄԵԾ ՕՐԻՆԱԿ մ'է ուրիշ մեծ օրինակներու քով ։

Արդարև, Պ. Ժան-Պատիստ-Անտրէ Տիւմա, ծնած էր 1800ին յուլիսի 14ին, Ալէ քաղքին մէջ, բաւական հին բայց ոչ հարուստ ընտանեաց մէջ, իւր հայրն տեղւոյն քաղաքապետութեան քով պարզ գրագրի պաշտօն վարելով ։

Դպրոց սկիզբը այդ Ալէ քաղաքը, որ այժմ ևս մեծ հռչակ մը չունի՝ բոլորովին անծանօթ էր և հազիւ հազարի չափ բնակիչներ ունէր ։ Սակայն կանոնաւոր վարժարանի պակասութիւնը ու գիտնոց բացակայութիւնը արգելք չեղան որ Տիւմա առաջ կացմուածով և զօրաւոր արամաութեամբն սկսի իւր առաջին քայլերն առնել գիտութեան մէջ ։ Դեռ մանուկ հասակին մէջ քաղաքին շրջակայները կը հետազօտէր, քարի կտորներ կը հաւաքէր՝ կ'այցելէր գործարանները և այս սկզբնական հետազօտութիւնքը այնքան խոր տպաւորութիւն բրած էին իւր մտաց մէջ որ այս վերջին տարիներս իսկ կը յիշէր իւր մանկութեան այդ օրերը ։ Ծնողքը զինքը կը յատկացնէին ծովային պաշտօններու և այս դիտաւորութեամբ կ'աշխատէր երբ 1815ի քաղաքական դէպքերը իւր ընտանեաց դրամական վիճակը այնքան դժուարին կացութեան մէջ դրին որ աշխատասէր և գիտութեան ծարաւի պատանին, չգտնելով տեղական Զարիֆի մը բարեսիրտ ձեռնտուութիւնը՝ ստիպուեցաւ դեղագործի քով աշկերտ (եամախ) ըլլալ ապրուստը ճարելու համար ։

Բայց այս երկար չտևեց ։ Քաղաքական դէպքերը կը շարունակէին և հայրենեաց մէջ տիրած ներքին բաժանմունքը, աբրինհեղութիւնք, յուզմունք և պատախմունք այնքան դէշ տպաւորութիւն բրին դեռահաս հայրենասիրին վրայ որ հրաման խնդրեց իւր ծնողքէն հեռու երկիր մը քաշուելու համար, որոնք տեսնելով որ պղտորմունքն իւր առողջութեան կը վնասեն՝ թողուցին որ երթայ ։ Եւ ահա, 17 տարեկան հասակին մէջ, Տիւմա ճամբայ ելաւ իւր քաղաքէն հեռիան Ժէնէվա երթալու համար ։

Հոն գտաւ իւր փնտռածը, ժամանակին երևելի գիտունները ։ Պաշտօն բռնեցաւ Պ. Լըռուայէի դեղարանին տարրաբանական աշխատանոցին մէջ և այս պարագայն օգնեց իրեն դեղագիտութեան շատ մը ուսանողներու հետ բարեկամանալու, անոնց հետ գիտական միութիւն մը կազմելու և անոնց գործնական տարրաբանութեան դասախօսութիւններ ընելու ։ Ահա այս առենէն սկսաւ դասախօսութիւններ ընել ։ Բայց շատ դիւրին բան չէր իւր առանձնած պաշտօնը, ինչու որ, իւր աշխատանոցին մէջ դրտնուած գործիքները հին դրութեան օգտակար, մեծաւ մասամբ անյարմար էին նոր փորձերու ։ Զորօրինակ, կշռելու փորձերու համար չկար գործիք ։ Կանթեղներու շիշերը մեղրամոմով կը թխմէր սրուակ մը շինելու համար, կշիռ մ'ունենալ երազին մէջ կը տեսնէր և մետաղեայ դրեխ մը իբր օդական մեքենայ կը գործածէր...

Բայց շատ յաջողեցաւ երիտասարդին համբերը ։ Ծախու դրուած ալեր և ծծմբատները քննելով գտաւ որ անոնց մէջ պարունակեալ ջուրը մինչև որու չափով էր. և որովհետև և ոչ մէկ գրքի մէջ այս գրուած գտաւ իւր աշխատութիւնը խմբագրեց և առաւօտ մը երևելի Պ. Տը Լա Ռիվ գիտնոյն առջևը տարաւ ձեռագիրը ։ Գիտունը աշխատութեան վրայ ակնարկ մը նետելով չկրցաւ զարմանքը զսպել և ըսաւ.

— Տղա՛ս, այս փորձեր դո՞ւն բրիր ։

— Հարկաւ ։

— Եւ շատ ժամանակ զբաղեցի՞ր ։

— Անտարակոյս ։

— Լաւ ուրեմն, կրնամ ըսել որ Պէրցէլիուսի հետ միևնոյն գիւտն բրած ես ։ Ինքը դեռ կանխած է բայց նա աւելի ծեր է և պէտք չէ որ նախանձիս...

Տիւմա շփոթած էր և չէր գիտեր թէ ինչ պատասխանէ ։ Առաջին անգամ էր որ մեծ գիտնոյ մը հետ կը խօսէր երեսառերես ։ Այն ատեն Պ. Տը Լա Ռիվ ըսաւ բարեկամական ձևով մը.

— Եկո՛ւր, բարեկամս, միասին նախաճաշենք ։

Եւ այն վայրկենէն բարեկամացան իրարու հետ, այնպիսի բարեկամութեամբ որ երբեք չխզուեցաւ ։

Երկրորդ գիւտն եղաւ հասարակ կամ հեղուկ մարմնոց հիւլէներու կշիռը գտնելու միջոցները, որոց մասին խմբագրած տեղեկագիրը կարդալ Պ. Տը Լա Ռիվի ներկայից որոնք չքաջալերեց, իւր անտարբերութեանց հակառակ ըլլալուն ։ Դեռահասն Տիւմա, յուսահատ և զարմացած ըսելով ինքնիրեն, «Առաջին անգամ փորձերս լաւ էին, բայց ոչ նոր ։ Այս անգամ նոր են, բայց կ'երևի թէ լաւ չեն ։ Վերջապէս կրկին պիտի փորձեմ ։»

Օրին մէկը աքթէօր Քուանդէ անձամբ Լը Ռօյէ դեղարանը կը ներկայանայ և կը հարցնէ Տիւմայի

— Տարրագիտութեամբ կ'զբաղի՞ս ։

— Այո, քիչ մը, կը պատասխանէ նա ։

— Կրնա՞ս ըսել ինձ, թէ սպունգի մէջ, մանաւանդ այրած սպունգի մէջ եօդ կա՞յ թէ ոչ ։

— Կը փնտռեմ, կ'ըսէ ։

Եւ մի քանի օր վերջ աքթէօր Քուանդէ հասարակական պատասխան կ'ընդունի, որոյ իբր հետևութիւն կը գտնէ թէ եօդը դեղ է խպիպ (կուաթար) հիւանդութեան դէմ ։ Լուրը ամեն կողմ կը տարածուի և առաջին անգամ համար Տիւմայի անունը գիտական թերթերու մէջ կը տեսնուի ։ Լը Ռօյէ դեղարանը մեծ գումարներ կը շահի նոր դեղին վաճառմամբը ։ Այն ատեն Տիւմա 19 տարեկան էր ։

Բայց ասկէ վերջն է որ ա՛լ աւելի օգտակար գիւտերը կ'սկսին ։ Բռէվօսթ անուն ուրիշ տարրաբան մը հետ սերտ բարեկամութեամբ կապուած սկսան արեան բաղադրութիւնը քննել ։ Հետազօտել արիւնէն բղխած այլ հեղուկներու բաղադրութիւնները ինչպէս կամ են ։ Կենդանեաց մարմինը կազմող նիւթերը ինչ տարրերէ բաղկացած են ։ Ի՛նչ է շնչառութեան գործիքին կազմակերպութիւնը ։ Ո՛ր է կենդանական ջերմութիւն յառաջ բերող հնոցը ։ Ինչպէս բացատրել հարկ է մարսողութեան երևոյթը ։ Մարմնոյ այլ և այլ հեղուկներ արտադրող անդամները ի՞նչպէս կը գործեն, ևն ևն ։ Այս տեսակ խնդիրներ ամեն օր երկու բարեկամաց խուզարկութեանց առարկայ ըլլալով իրենց աշխատութեանց նոր ուղղութիւն մը կուտային ։

Ձեռք կարող հօս բացատրել թէ ի՛նչ եղան իրենց աշխատութիւնքը այս մասին ։ Բաւէ օր մը երբ առիթը ներկայանայ յիշեմ մաս առ մաս ։ Բայց սա ըսեմ թէ դժուարութիւնք անպակաս էին ամեն կողմանէ ։ Արգիլեալ էր կենդանեաց վրայ փորձեր ընել և երկու բարեկամները, գիշերը, գաղտագողի կը շրջէին Ժէնովայի փողոցները շուներ, կատուներ, մուկեր ևն. որսալու համար, վախնալով որ անոնց ձիչերը անցորդաց ուշադրութիւնը չգրաւեն որով ամեն տեսակ փորձանաց կրնային հանդիպիլ ։

Անանց հաշուելու ընկերակցութեամբը առաջ տարած աշխատութիւնքը, Տիւմա, առանձինն ևս կ'աշխատէր զուտ տարրաբանական խնդիրներով և այս պահուն էր որ Եթէրի բաղադրութեան մասին նախորդաց սխալները կուղղէր հաստատուն փաստերով ։

Տիւմա կը պատմէր թէ 1822ին, օր մը իւր սենեակը առանձին կաշխատէր մանրադիտակով տեսնուած մարմնոյ մը պատկերը գծելու, և ի դիւրութիւն շարժքով կ'աշխատէր, երբ սանդուխէն վեր ելլողի մը ոտքի ձայնը առաւ ու մեքենաբար իւր դուռը դարձուցաւ:—Մտի՛ր, կը պոռայ առանց աշխատութիւնը փոխելու ։ Դրսէն ներս վեր առնելով կը տեսնէ մարդու հագուած, սև զգեստով, փայլուն կոճակներով, վերջապէս հնաւուրց բայց կոկիկ ճաշակով հագուած մէկը, որ կ'ըսէ ծիծաղելով.—Դուք Պ. Տիւման էք, այնպէս չէ՞ ։—Այո պարոն, ներեցէք այս կերպարանքիս.— Անհանգիստ մի ըլլաք, կ'ըսէ օտարականը, ես Պ. տը Հիւմպօլտ եմ, չուզեցի Ժէնովայէն անցնիլ առանց ձեզ տեսնելու հաճոյքն ունենալու ։

Տիւմա կը շփոթի և կը կարմրի ։ Ի՞նչպէս, երևելին Հիւմպօլտ, Հիւմպօլտ որ թագաւորներու հետ կը կենակցի, իրեն այցելութիւն տայ ։ Անմիջապէս հագուստը կը հագնի, թողութիւն կը խնդրէ, իւր միակ աթոռը կը հրամցունէ և ինք անկողնին վրայ նստած կը տեսակցին ։

Շուտ կը բարեկամանան երկու գիտունները և Տիւմա մի քանի աւուր տեսակցութիւն ունենալով այնքան կզգածուի և այնքան կը փոխուին իւր գաղափարները որ Հիւմպօլտի մեկնելէն վերջ Ժէնովա անապատի մը պէս կերևայ իրեն ։ Արդարև տիեզերագէտ Հիւմպօլտ Տիւմայի հետ խօսակցութեանց միջոցին Բարիզի վրայ ևս խօսած էր, Բարիզի գիտնոց վրայ, Ֆրանսայի վրայ, Փրանսացւոց վրայ և Տիւմայի սրտին մէջ հայրենեաց կարօտը արթնցած էր ։ Չկրցաւ այլ ևս կենալ ի Ժէնովա և մեկնեցաւ անկէ 1823ին ։

Շատ բաներ ունիմ Տիւմայի ի Բարիզ վերադարձին վրայ ըսելու, բայց այս չէ կարելի յօդուածս տարօրինակ կերպիւ չերկարելու համար ։ Սակայն չեմ կարող զիմադրել հետևեալ անցքը պատմելու փափաքիս, որով կրնամ ցոյց տալ թէ ինչ ընդունելութիւն գտաւ Տիւմա Բարիզի մէջ ։

Բարիզի գիտական Ակադեմիային մարդակազմութեան վրայ աշխատութիւն մը կը ներկայացունէր, օր մը, և աշխատութիւնը նիստին մէջ կարդալէ վերջ, համեստօրէն պատուհանի մը անկիւնը քաշուած կը կենար երբ Ակադեմիային անդամներէն մին, ձերմակ մազերով և ազնուական ձևով, սրահին մի անկիւնէն ոտքի ելլելով, ծանրաքայլ եկաւ իրեն քով և ըսաւ պաշտօնական ձևով մը—«Պարոն Տիւմա, կը հաճի՞ք յառաջիկայ չորեքշաբթի հրամայելով միասին ճաշելու պատիւն ընել ինձ ։»

Բնականաբար այսպիսի հրաւէր մը ընդունելի էր ։ Մի քանի խօսք ընելէ վերջ ալևոր անդամը տեղը դարձաւ, ճամբուն վրայ ամենուն կողմանէ յարգանաց նշաններ ընդունելով ։ «Ո՞վ տունը պիտի երթամ, հարցուց Տիւմա քովիններուն.—Չե՞ս ճանչնար Պ. Տը Լաբլաս» պատասխանեցին իրեն ։ Պ. Տիւմա այսպէս բարեկամացաւ Մեծին Լաբլասի հետ և նորա մահուանէ վերջ Տիկին Տը Լաբլաս Մարքիզուհւոյն հետ շարունակեց իւր բարեկամութիւնը ։

1826ին Տիւմա ամուսնացաւ ։ Այնպէս սերտ սիրով կապուած էր իւր ամուսնոյն հետ որ մինչև վերջին վայրկեանը երջանիկ ընտանեաց տիպար մը կը կազմէին ։

Լիէպիկ և Տիւմա, միևնոյն նպատակին համար աշխատողներ, գիտութեանց այս ճիւղին մէջ գաղափարաց ընդհարում մը ունեցան ։ Վիճաբանութեան տաք միջոցին եղաւ որ անհաճոյ խօսքեր փոխան իրարու դէմ, սակայն երկուքն ալ ճշմարտութեան համար կը պատերազմէին և անգամ մը որ կռիւը վերջացաւ ձեռք ձեռքի տուին ու մոռցան բաժնեքը ։ Կուզէի յիշատակել հօս այն նամակը որ այս առթիւ Լիէպիկ գրած է առ Տիւմա և որ վեհանձնութեան, ճշմարտասիրութեան ու միանգամայն զգուշութեան օրինակ մ'է մանաւանդ այնպիսի խմբագիրներու համար որ սխալ բառի մը համար գլուխ գետնէ գետին կը զարնեն ։

Ամբողջ տարրագիտութիւնը յեղաշրջեցին Տիւմայի գիւտերը, իւր Տարրագիտական Փիլիսոփայութիւն անուն գիրքը որ տարիներէ ի վեր բազմաթիւ տպագրութիւններ ունեցած է և որ այս տարի ևս նոր տպագրութիւն մ'ունեցաւ՝ հիացում պատճառած է ընթերցողներու ։ Իւր ամեն գործերը հօս յիշատակել անկարելի է ։ Ընդ մէջ այլոց Ամոնիաքի (Նիշատր) վրայ աշխատութիւնքը ։

Տիւմա իւր աշխատութեանց մէջ չէ մոռցած նաև իւր հայրենեաց օգտակար ըլլալու այլ միջոցները ։ Ինքը հիմնադիրներէն եղած է մեզ ծանօթ Փարիզի ճարտարագիտաց վարժարանին (Էքօլ Սանթրալ տէզ Ար է Մանիւֆաքթիւր), ուրկէ ելլող բազմաթիւ Հայ ճարտարագէտք կան, քիչ մը ատեն նախարարութեան պաշտօն վարած է. և Ֆրանսական Ակադեմիայի ալ անդամ էր, ըսել է պաշտօնակից բանաստեղծներու, դրագէտներու և այլն ։ Անցեալ տարի իւր Գիտական Ակադեմիային անդամակցութեան յիսուներորդ տարին տօնեցին և այս առթիւ իւր աշակերտները, որ իրեն պէս գիտուններ դարձած են, և այժմ մեծ մասամբ Ակադեմիան կը կազմեն՝ ոսկեդրամ մը նուիրեցին իրեն որուն մէկ կողմը իւր դիմագիծը կոփուած է և միւս կողմը արձանագրութիւնք ։

Վերջերս ինքը Փարիզէն հեռու, Քան քաշուած կ'ապրէր ընտանեացը քով, իւր ծեր հասակին մէջ դաշտային մաքուր օդը ծծելով առողջութիւնը անվթար պահելու համար ։ Շատ անգամ հեռագրով տեղեկութիւններ կը հաղորդէր Ակադեմիային և հեռուէն կը հետևէր օրուան աշխատութեանց ։ Դեռ չեմք գիտեր իւր վերջին օրերը և մահուան պարագաները.— յառաջիկայ թղթաբերին կ'սպասեմք ։

Խօսքս վերջացնելէ առաջ յիշեմ հե[illegible]

[illegible]

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

[illegible]

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՊՈԼՍՈՅ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ ՄԱՐՏ 27—2 ԱՊՐԻԼ

ՑՈՐԵՆ.— Եւրոպայէն եկած լուրերը հրապարակը հանդարտութեան մէջ ձգած են. բայց գիները բռնուած են քիչ ապրանք գալուն պատճառաւ: Հասաւ 25,000 գրիւ կակուղ: Վաճառեցաւ 10,000 գրիւ կակուղ: Պատրաստ 25,000 գրիւ:

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ.— Այս վաճառքը բաւական բանուկ էր այս շաբթու և վաճառմունք եղան 13¼—13½ գրիւը: Պահանջը լաւ է:

ԳԱՐԻ.— Տեղական սպառման համար վաճառմունք եղան ի գին դրշ. 11⅞ գրիւը երկրորդ տեսակաց համար, իսկ 12 առաջին տեսակաց համար: Գիները լաւ բռնուած են, հրապարակը հանդարտ: Պատրաստ 15,000 գրիւ:

ՋԱՎՏԱՐ.— Այս շաբթու 2000 պարկ վաճառեցան ի գին 11 գրիւը: Հրապարակը շատ հանդարտ է:

ԼՈՒԲԻԱ.—Շաբթուս հասած ապրանքները տեղական սպառման համար, վաճառեցան Դանուբի ի գին 138-143 դրշ. 100 օխան. իսկ Օրտուինը 122-130: Հրապարակը հանդարտ է եւ գիները լաւ բռնուած: Պատրաստից նուազութեան համար:

ԼԱ.— Հրապարակը հանդարտ է. տեղական սպառման համար մաս մը վաճառեցաւ ի գին 28 փրյ:

ԻՍԵՌՆ.— Այս շաբթու հրապարակը հանդարտ է, տեղական սպառման համար 2500 օխայ, երկրորդական ապրանք վաճառեցաւ ի գին 42 փրյ և լաւ Պալը Քէսէրի Սեմա ի գին 50 փրյ օխան:

ԱՆԱՀՈՒՆՏ.— Տեղական սպառման համար վաճառեցաւ 60 փարայէն օխան բայց պատրաստ ապրանք չը գտնուիր. Թրանզիթով նշանակուելու գործ չկայ:

ՍՈՒՍԱՄ.— Այս շաբթու վաճառմունք եղան Պալը-քէսէրի ապրանք 82 փրյ. և Մարմարայի 100 փարայէն. հրապարակը հանդարտ և գիները ակար կերպով բռնուած են:

ԵԷՄԻ.— Փոքր ինչ վաճառեցաւ ի գին 58 փարայէն օխան: Հրապարակը արտ է:

հանդ **ՀՈՒՆՏ.**— Հրապարակին վրայ 6,000 օխայի չափ ապրանք կը գտնուի որոց
ՔԷՆՏԻՐԻ յ. կուտան:

ՅՅ **ՓՀՈՒՆՏ.**—Հրապարակը հանդարտ է, գիները շատ ակար և պատրաստ շատ քիչ:

ԱՖԻՈՆ

ԱԼԻՒՐ

պակը բանուկ չէ, թէպէտ և գիները բարձրացած կ'երեւին, բայց այս Հրապա ցումը Րումէլիի վրայ եղած տարբերութենէն յառաջ եկած է: Այս շաբ- բարձրա առեցաւ 150 պարկի չափ Ռուսական և 10,000 շըմէնտըֆէր: Պատրաստ թու վա պարկ, որոնց 40,000 պարկ Րումէլի, 5,000 Օտէսա, 15,000 Պրայլա: 60,000

ԳԱՂԹԱԲԵՐՔ

ՇԱՔԱՐ.— Հասաւ 3,000 պարկ: Վաճառեցաւ 2,500 պարկ: Պատրաստ 3,800: Հրապարակը բաւական բանուկ է, բայց գիները ակար:

ՈՒՐՃ.— Հասաւ ոչինչ: Վաճառեցաւ 300 պարկ: Պատրաստ 7,200 պարկ: Հրապարակը հանդարտ է այս շաբթու և գիները անկման վրայ:

ԲՐԻՆՁ.— Հասաւ այս շաբթու 1,300 պարկ Անգղիական և 550 պարկ Իտալական: Վաճառեցաւ 2,800 պարկ Անգլիական և 500 պարկ Իտալական: Պատրաստ 3,500 պարկ Անգլիական և 500 Իտալական: Հրապարակը շատ հանդարտ է:

ՄՈՄ.— Հասաւ 3,000 սնտուկ: Վաճառեցաւ 1.000 սնտուկ: Պատրաստ 3,000 սընտուկ: Հրապարակը լաւ բռնուած է, բայց գիները անկման ենթակայ, այս շաբթու վաճառեցաւ 100 սնտուկ ի գին 7⅝ փարայէն քիլօն:

ՔԱՐԻՒՂ.— Հասաւ 400 սնտուկ և 1,700 տակառ Ռուսական: Վաճառեցաւ 3,000 սնտուկ Ամերիկեան և 200 տակառ ու 400 սնտուկ Ռուսիոյ: Պատրաստ 4,000 սնտուկ Ամերիկեան և 2,300 վարիլ և 30,000 սնտուկ Ռուսական: Հրապարակը հանդարտ է և գիները շատ ակար կերպով բռնուած է:

ԱՊԱԿԻ.— Հասաւ ոչինչ: Վաճառեցաւ 300 սնտուկ: Պատրաստ 9,000 սնտուկ: Հրապարակը հանդարտ է, գիները ակար:

ՊՂՊԵՂ.— Հաստատ բռնուած են:

ՈԳԻ

ԱԼՔՈԼ.— Այս շաբթու կարեւոր գործ մը չեղաւ, բայց գիները բարձրացան: Հասաւ 70 տակառ. վաճառեցաւ 30 տակառ. Պատրաստ 150 տակառք:

ՌՕՄ.— Հրապարակը շատ հանդարտ է և գները անկման վրայ են, գործ չըլլալուն պատճառաւ: Հասաւ 200 տակառակ Անգլիական: Վաճառեցաւ 150 տակառակ: Պատրաստ 500 տակառակ:

ՄԵՏԱՂՔ

ԵՐԿԱԹ.— Եւրոպիոյ հրապարակները հաստատ են և ըստ այնմ մեր գներն ալ լաւ բռնուած և բարձրանալու կը միտին: Այս շաբթու բաւական գործ եղաւ: Այս շաբթու հասաւ 350 թօնօ: Վաճառեցաւ 150 թօնօ:

ԱՆԱԳ.— Հասաւ 30 տակառակ: Վաճառեցաւ 100 տակառակ: Պատրաստ 250 տակառակ: Հրապարակը հանդարտ է, գիները անփոփոխ:

ՃԷԼԻԿ.— Հասաւ 400 սնտուկ: Վաճառեցաւ 100 սնտուկ: Պատրաստ 2,900 սնտուկ: Հրապարակը հանդարտ. գիները անփոփոխ:

ԿԱՐՓԻՑԱ.— Հասաւ ոչինչ: Վաճառեցաւ 1,000 տակառակ: Պատրաստ 28,000 տակառակ: Հրապարակը հանդարտ գիները անփոփոխ:

ԹԷՆԷՔԷ.— Հասաւ 150 սնտուկ: Վաճառեցաւ 550 սնտուկ: Պատրաստ 350 սնտուկ: Պահանջը աննշան է, և գիները անկման ենթակայ:

ՑԻՆԿՕ.— Հասաւ ոչինչ: Վաճառեցաւ 50 տակառակ: Պատրաստ 950 տակառակ: Հրապարակը հանդարտ, գիները միեւոյն:

ՄԱՆԻՖԱԹՈՒՐԱ

Այս շաբթու գործերը շատ հանդարտ կերպով անցան. տօներուն պատճառաւ վաճառողք շատ քիչ են. Պարսկաստանի համար բաւական լաւ գործեր եղան կանխիկ:

ՄԱՀՈՒՏԻ.— Այս շաբթու պատրաստ գտնուած ապրանքներէն քիչ մը բան ծախուեցաւ ստորին տեսակը ի գին 3⅝ և երկրորդական տեսակները ի գին 3—3⅝:

ԼՈՆԿ ԳԼՕԹ.— Այս շաբթու մէկ քանի 100 կտորներ վաճառեցան ի գին 3⅛ լիպրան:

ՆԷԼՔԷՆ ՊԷԶԻ.— Այս շաբթու նշանակուելու արժանի գործ մը չեղաւ:

ԽԱՄ ՊԷԶ.— Շաբթուս այս ապրանքին վրայ եղած գործերը նշանակուելու արժանի բան մը չեն, գիները բռնուած են:

ԹԷՆՋԻՖ.— Այս շաբթու նշանակելու արժանի գործեր չեղան. Հրապարակը վերջին աստիճան հանդարտ, և գիները ակար կերպով բռնուած են:

ՊԱՍՄԱ.— Այս շաբթու այս ապրանքին վրայ վերջին աստիճան հանդարտութիւն մը կը տիրէ ապրանքին նուազութեանը պատճառաւ:

ՀԱՆՔԱԾՈՒԽ

Այս շաբթու նշանակուելիք գործ մը չեղաւ, գիները անփոփոխ են և հրապարակը հանդարտ: Հասաւ 1,800 Նիւքասըլ և 1,730 թօնօ գարտիֆ: Վաճառեցաւ 1,200 թօնօ: Պատրաստ 9,000 թօնօ:

ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆ

ԹԻՖԹԻՔ.— Այս շաբթու վաճառեցաւ 150 հակ. որոց 60 հակը Պէյպազար և Կըբէտէ ի գին 20½ դրշ. 20 հակը չէրքէզ խառնուած 19½ դրշ. 44 հակ Էնկիւրիւ երկրորդական ի գին 18-19 դրշ. 416 հակ Քօնիա երկրորդական ի գին 16½ դրշ. օխան: Պատրաստի 13,000 հակ: Հրապարակը խիստ հանդարտ, գիները լքեալ Անգլիայէն եկած դէշ լուրերուն վրայ:

ԲՈՒՐԴ.— Այս շաբթու շատ քիչ գործեր եղան միայն 3-5000 օխայի չափ վաճառեցաւ: Պատրաստ 30-40,000: Հրապարակը հանդարտ:

ՄԵՏԱՔՍ.— Այս շաբթու վաճառեցաւ, 3 հակ Քօզանդ ի գին 198-200 դրշ. 5 հակ Խօրասան ի գին 212, 8 հակ Քութայիս չըքընթը ի գին 48 դրշ. մէճիտ, և 3 հակ Րէշտ ի գին 34 Ֆրանքէն օխան: Պատրաստ 220 հակ: Հրապարակը հանդարտ է, բայց գիները լաւ բռնուած, եթէ վաճառող սակարկութեանց վրայ շատ չը դիմանային, բաւական մեծ գործեր ըլլալը շատ հաւանական էր:

ԲԱՄԲԱԿ.— Այս շաբթու վաճառմունք չեղաւ և հրապարակը հանդարտ:

ՔԷՆՏԻՐ.— Այս վաճառքը խիստ հանդարտ է. միայն տեղական սպառման համար քիչ մը գործ կը լինի:

ԿԱՊԵՐՏ.— Այս շաբթու վաճառեցաւ 1,120 կտոր Շիրվան Նամազի Նոր ի գին 24½–26 Ֆրանքի: 400 կտոր Շիրվան Նամազի հին ի գին 42½ Ֆրանքի, 170 կտոր Նամազի Գարապաղ Նոր 21 Ֆրանքի, 245 կտոր Նամազի Շիրվան և Քարապաղ խառնուած ի գին 23 Ֆրանքի, 552 կտոր Քարապաղ՝ որոց 204 կտորը 23 Ֆրանքէն 248 կտորը 27 Ֆրանքէն և 100 կտորը 33 Ֆրանքէն, 324 կտոր Քազաք ի գին 42½–45 Ֆրանքի, 70 կտոր Խիվա որոց 20ը մեծ ի գին 5½ ոսկիէն, 40 հատ միջինները 3 ոսկիէն և 10 հատը փոքր 50 Ֆրանքէն, 18 կտոր սէճատէ Ֆէրաղէ ի գին 3 ոսկիէն հատը և 100 կտոր Ֆէրաղէ ի գին 19 Ֆրանքէն մէկ քառակուսի մէթրը: Պատրաստ 5000 կտոր, Հրապարակը շատ բանուկ է, շատ մը վաճառողներ գտնուելու վրայ, և մեծ գործ եղաւ Նամազներու վրայ:

ԱՖԻՈՆ.— Այս շաբթու վաճառեցաւ 3 սնտուկ Էնկիւրիւ 160 դրշ. թալէ քուալէ 3 սնտուկ ալ Կէյվէ թալէ քուալէ 151 դրշ: Հրապարակը հանդարտ է:

ՔԻԹՐԷ.— Վաճառեցաւ 1,000 օխայ բանուած ճերմակ Քայսար ի գին 20½: Հրապարակը հանդարտ է: Պատրաստ 35,000 օխայ:

ՄԱՀՄՈՒԶԻՅԷ.— Նշանակելի կարեւոր գործ մը չէ եղած. բայց գիները բարձրացած են:

ՍԱԼԷՊ.— Այս շաբթու վաճառմունք չեղաւ և հրապարակը հանդարտ է: Պատրաստ 1600 օխայ. կարեւոր վաճառմունք մը չէ եղած:

ՄԵՂՐԱՄՈՄ.— Վաճառեցաւ 700 օխայ ի գին 20½–22 դրշ. օխան: Պատրաստ 800 օխայ. հրապարակը հանդարտ է:

ՃՂԻՆ.— Այս շաբթու վաճառմունք չեղաւ: Հրապարակը հանդարտ և թոյլ է:

ՃԷՀՐԻ.— Այս շաբթու վաճառեցաւ 30 պարկ Զօրում ի գին 11–11½ դրշ: Պատրաստ 9000 պարկ: Հրապարակը հանդարտ է:

ՄԱԶԻ.— Պատրաստ 250 պարկ սեւ տեսակ. հրապարակը հանդարտ է և գիները անկման ենթակայ:

ՄՈՐԹ.— Այս շաբթու մորթի վրայ ամենեւին նշանակելի գործ չեղաւ:

ԿՈՎՈՒ ՄՈՐԹ. —Այս շաբթու այս ապրանքին վրայ նշանակելի գործ մը չեղաւ:

ԱՅԾԻ ՄՈՐԹ. —Այս շաբթու վաճառեցաւ 600 կտորի չափ ի գին 18–20: Պատրաստ 2000:

ՈՉԽԱՐԻ ՄՈՐԹ. — Գործ մը չէ եղած այս տեսակին վրայ վի պատրաստ չկայ:

ԳԱՌԱՆ ՄՈՐԹ.— Վաճառեցաւ այս շաբթու 50-60,000 կտորի չափ գին 18–18½ դրշ: Պատրաստ 10-15,000 կտոր:

ԸՆԹԱՑԻԿ ԳԻՆԵՐ

Ցորեն Կիրգա Ռուսիոյ	Լիպրայ	57—59	Դ.շ.	22½—	Քիլէն
» » Դանուբի	»	57—59	»	—	»
» Կակուղ Կալաց և Պրայլա	»	57—59	»	19 — 21	»
» » Պուլղարիոյ	»	57—58	»	19 — 20	»
» » Րումէլի	»	57—58	»	19½— 21	»
Եգիպտացորեն, Կալաց, Իպրայիլ և Օտէսա»			»	13 — 13½	»
» » Օրտու և Տաճկական			»	11 — 12	»
Գարի կակուղ			»	11½— 12	»
» հաստ			»	11 — 11¼	»
Ջավտար			»	11 — 11¼	»
Բիթանահունտ (քէթէն թօխումը)			»	22 — 31	»
Գանար եէմի			Փրյ	38 — 38½	Օխայ
Նօխուտ Գալիքէսէր			»	35 — 50	»
» Ախէնք			»	40 — 50	»
Քէնտիրի հունտ			»	80 —	»
Գակլա			»	28 —	»
Սուսամ Մուտանիա Գալըքէսէր			»	82 — 100	»
» Մէրսին			»	100 —105	»
Աֆիոնի հունտ			»	55 — 56	»
Լուբիա Օրտու			»	122 —130 100	»
» Դանուբ			»	130 —143 »	»
Օտէսա Ա. Ալիւր			Դրշ	128 —134	Պարկը
» Բ. »			»	118 —124	»
» Գ. »			»	97 —110	»
Ապխիա			»	94 — 98	»
Պրայլա տիպիկանի հետ խառնուած			»	75 —	»
Պրայլա			»	82 — 83	»
Վառնա			»	73 — 76	»
Շըմէնտըֆէր			»	75 —	»

Խահվէ	Դ.շ.	730—820—880	Օխյ.	100	ոսկին
Լեղակ ալէնկալ	»	100—140	»	»	»
» Բուրբոյ	»	87—100	»	»	»
Որդան կարմիր Թուխ	»	11—618	»	»	»
» կարմիր ճերմակ	»	—416	»	»	»
Բիբէր	»	—11¾	»	»	»
Կինամոն (դարչին)	»	5½— 6	»	»	»
Գարէնֆիլ	»	9—10	»	»	»
Թէյ սեւ ստորին	»	12— 16	»	»	»
Թէյ առաջին և լաւ	»	29— 88	»	»	»
Շաքար Հոլանտոյ	»	170	կենդինըը	103	»
» Դրիէօթէ Ա. (պարկի մէջ)	»	167	»	»	»
» » Բ. (»)	»	164	»	»	»
» » Գ. (»)	»	158	»	»	»
Ծծումբ	»	37— 38	»	100	»
Խունկ (Գիւնլիւք)	»	220—240	»	»	»
Բրինձ Իտալիոյ Ա. Ռիզօն	Ֆրանք	47	Պարկը	»	»
» » Բ. »	»	46	»	»	»
» » Ա. սովորական	»	39	»	»	»
» » Բ. »	»	42	»	»	»
» » Գ. »	»	36½	»	»	»
» Հնդկական	Դրշ	124—127—130	»	»	»
Գօլա Գաղիական	»	3¼	Օխյ	»	»
» Անգղիական	»	178	Սնտուկը	»	»
Մոմ	Դրշ	7⅝	Քիլօ	»	»
„ Գաղիական	„	100 11	»		»
Կազ Ամերիկայի սնտուկ	»	35—38	»	»	»
» Ռուսիոյ	»	35	»	»	»
» » (փարիլի մէջ)	Փարայ	45	Օխյ	»	»
Ոգի Ռուսիոյ Օլատոփքա	Օխայ	23 — 23½		1	Ռուպլոյ
» » Սօտինսքի	»	24 —			»
» » Խարքով	»	25—26½			»
» Վար տեսակ Սէլանիկ եայլն	»	26 —27			»
Ռօմ Թրիէսթէ	Կալլօն	—18½			»
Անգղիոյ		9 —9½			»
Անգղիական երկաթ (չուպուգ)		45			կենդինարը
» Երկաթ (թէմէր)		45			»
Շուէտի » (չուպուգ)		77 —79			»
» » (թէմէր)		80			»
Տախտակ» (Սաճ) Թիւ 1— 4		62 —			»
» » » » 5—10		70 —			»
» » » » 11—14		79 —			»
Կըր		90			»
Ջէմպէր սովորական		60			»
» Մեծ դիրք		65 —67			»
Անագ (գալայ)		590—600			»
Կապար (սաչմա)		112—			»
» Տախտակ		120—			»
» Խողովակ		120—			»
Ջէլիք	Դրշ	132—			Սնտուկը
Գարփիցա · · · · 45 գլլոնոց	»	58— 61—			Վարիլը
Թէնէքէ	»	197—			2 Սնտուկը
Պղինձ	»	12⅛-12⅜	Օխյ		»
Ցինկօ	Ֆրանք	72— 73		100	Օխյ

Հանգածուխ Նիւգասըլ (ի վաճառատուն)		21 Շ. 0 Բ. — 22 Շ. 0 Բ.			Թօնօն
» » » (ծովու վրայ)		22 » 6 » — 23 » 6 »			»
» » Գարտիֆ (ի վաճառատուն)		22 » 0 » — » 0 »			»
» » » (ծովու վրայ)		23 » 0 » — 24 » 0 »			»
» » Հարթըլբուլ		18 » 0 » — 19 » 0 »			»
Լիվէրբուլ		16 » 0 » — 17 » 0 »			»
Մաշուտ	Դրշ	6 — 6½	Լիպրան	Ոսկի	100
Ամերիգան ամբողջ եարտա	»	5½— 6	»	»	»
» պակասաւոր	»	4 — 5½	»	»	»
Ամարցու (լօնկ գլօթ) լաւ տեսակն	»	4⅝ — 5	»	»	»
» » » փոքր լիպրա	»	5⅛— 5½	»	»	»
» » » ներկուելու (գօրինքթ՛ն)	»	5⅜— 5½	»	»	»
Նէլքէն պէզի լաւ տեսակ	»	4½— 4⅜	»	»	»
» » միջին տեսակ	»	4¼— 4⅜	»	»	»
» » ստորին	»	4⅝—	»	»	»
Խամ մատամբօլ (չըրթինկ) լաւ տեսակ	»	38 — 48	Թօփը	»	»
» » » միջին »	»	50 — 60	»	»	»
» » » միջին »	»	60 — 68	»	»	»
Միւլ 4 Թիւ (չափալը) 3 Թօփը (30-35-38 ինչ.)	Դրշ	43		»	112
» 16 » (Թէնգլիֆ) » » (· · · · · ·)		39— 40		»	»
» 26 » (Սքօչիա) » » (· · · · · · ·)		53 — 53½		»	»
Մանած Վաթէր · · · · 4—14	Դրշ	36—38	փաքէթը	»	106
» » · · · · 18—28	»	46—48	»	»	»
» Էքստրա (Ֆիլէժէնկ) · · 4—14	»	40—53	»	»	»
» » (· · · ·) · · 18—28	»	50—59	»	»	»
» Էքստրա գրօմիթօն · · 16—24	»	63—64	»	»	»
» Մայլի · · · · 8—14	»	53—57	»	»	»
» » · · · · 20—24	»	67—71	»	»	»
» Կարմիր Իտալիոյ · · 4—14 լաւ	»	75—86	»	»	»
» » » · · · »— երկրորդ	»	60—65	»	»	»
» » Զուիցերիոյ Թիւ 20	»	68—73	»	»	»
» » Իտալիոյ » »	»	80—87	»	»	»
Թիֆթիք առաջին տեսակ	Դ.շ.	20 —	օխյ	100	ոսկի
» երկրորդ »	»	17¾- 19¼	»	»	»
» ստորին »	»	6 — 13	»	»	»
» Վան	»	12½- 13½	»	»	»
Բուրդ Քասապ պաչի Ա.	»	8 — 8½	»	»	»
» » » Բ.	»	6 —6½	»	»	»
» Քըրքմա · · · Ա.	»	6¼ - 6¾	»	»	»
» » · · · Բ.	»	4- 4½	»	»	»
Մետաքս Խօզանա	»	185 —205	»	»	»
» Նուխի	Ֆրանք	36 — 39	»	»	»
» Ռէշտ	»	25 — 31½	»	»	»
Բամպակ Հալէպ	Դ.շ.	5½	»	»	»
» Ատանա	»	6 — 6⅛	»	»	»
» Իզմիր և շրջակայք	»	6⅛- 6½	»	»	»
Աֆիոն Մալաթիա	»	250 — 255	»	»	»
» Սէլանիք	»	—	»	»	»
» Զիլէ Թօքաթ	»	230 —240	»	»	»
» Գալըքէսէր	»	170 —175	»	»	»
» Էնկիւրիւ	»	155 —160	»	»	»
» Նալը խան Պէյ պազար	»	150 —155	»	»	»
» Կէյվէ Պիլէճիք	»	150 —	»	»	»
» Զըքընթը	»	110 —135	»	»	»
Գիմրէ առաջին ճերմակ	»	27 — 29	»	»	»
» աշխատուած ճերմակ	»	24 — 25	»	»	»
» լաւ բնական »	»	21 —	»	»	»
» սովորական »	»	19 — 20	»	»	»
» լաւ դեղին	»	17 — 18	»	»	»
» երկրորդ դեղին	»	15 — 16	»	»	»
» Զամուր	»	4 —	»	»	»
Սալէբ լաւ տեսակ	»	16¼- 17	»	»	»
» երկրորդ տեսակ	»	14½- 15	»	»	»
Մահմուզիյէ առաջին ճերմակ	»	220 —240	»	»	»
» երկրորդ	»	100 —120	»	»	»
» երրորդ	»	60 — 80	»	»	»
Մեղրամոմ լաւ տեսակներ	»	20 — 22	»	»	»
» ստորին »	»	18 — 19	»	»	»
Կաղին Տրապիզոն	»	122 —	կենդինար	»	»
» Քէրասունի	»	120 —	»	»	»
Ճէհրի Էկին	»	14 — 15	Օխյ	»	»
» Քայսար	»	14½—15	»	»	»
» Անկորա	»	13½-14	»	»	»
» Թօքաթ	»	12½—13½	»	»	»
» Զօրում	»	12½ -	»	»	»
» Վար տեսակներ	»	00 —	»	»	»
Նշխուր	»	5 — 5½		»	»
Մորթ գոմէշի չոր	»	10¼—10¾		»	»
» թաց	»	6¾- 7		»	»
» կովի չոր	»	10 —10 2/8		»	»
» թաց	»	6¾— 7½		»	»
» Ոչխարի	»	18 — 26		»	»
» Այծի	»	18 — 20		»	»
» Գառին	»	14 —16½		»	»
» Այծուկի	»	00 —		»	»
» Նապաստակի	»	00 —		»	»

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏ ՄԸ

Գաղտակուրէ խեցիէ (սէտէֆ) վրայ
փորագրելու դիւրաց.

Մեղրամոմի խաւով մը ծածկել գաղտակուրի խեցին, քանդակագործի սրածայր գրիչով վրան պատկերը գծել մեղրամոմին այն մասերը հանելով: Յետոյ ինչպէս որ կ'ընեն ժանտաջրով փորագրութիւն (կրավիւալ ֆօրթ), վրան լեցնել թթուուկ (ասիտ) որն որ մեղրամոմ չգտնուած տեղերը կը կրծէ, բայց պէտք եղածին չափ ձգել թթուուկը որպէս զի գծերը չափազանց խորութիւն չունենան: Ի վերջոյ լուալ և մեղրամոմը հանել:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ
ԹԷ ԻՆՉ ԴԻՐՔ ՈՒՆԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԷՋ
Հեղինակեց
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉԵԱՆ ՀԱՅԿՈՒՆԻ
[illegible]
[illegible]
Կը վաճառուի Պօլիս Ֆրէնկեան գրատունը, Սուլթ Պօղոս աղայի քով, նաև ի տուն հրատարակչին Կէտիկ-փաշա, Զէչմէ փողոց, Թիւ 24:

ԳՈՒՄԱՆՏԱՐԻԱ
ԿԻՊՐՈՍԻ ԳԻՆԻ
10 ՏԱՐՈՒԱՆ
Ով որ կուզէ գնել ժամկառուելի յոյժ օգտակար գինիէն, մեծ և ա- ուր Պաղչէ-գափու Մաք ենթակայ գը առ Պ. Զարեհ, Թիւ ցանկ մը չափաւոր են:

ՏԱՄԱՏԵԱՆ ՁՈՒԼԱՐԱՆ
Օտուն-Գափու, Թիւ 465.
Հայերէն, Տաճկերէն, Յունարէն և Լատինական ամէն տեսակ Տպագրական տառեր և զարդեր կը գտնուին պատրաստ, յոյժ չափաւոր գներով:
Գաւառներէ և օտար երկիրներէ եղած յանձնարարութիւնք ամենայն ճշդութեամբ կը կատարուին, եւ հետեւեալ հասցէիւ ուղղուին մեզ.
S. DAMADIAN,
Odoun-Capou
CONS OPLE

Արտօնատէր, Ս. Տ
ՄԱՏԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՃԱՐԵ
Ղալաթիա, Քիւրէքճիլէր փողոց, Թիւ 44